

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«_____» _____ 2026թ.

N_____Ա

ՈՐՈՇՈՒՄ

ԵՐԵՎԱՆԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ 2025 ԹՎԱԿԱՆԻ ԾՐԱԳՐԻ
ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

«Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 83-րդ հոդվածի 3-րդ մասին համապատասխան.

Երևան քաղաքի ավագանին որոշում է՝

1. Ընդունել ի գիտություն Երևանի քաղաքապետի կողմից ներկայացված Երևանի զարգացման 2025 թվականի ծրագրի իրականացման հաշվետվությունը՝ համաձայն հավելվածի:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ՝

ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ

Նախագիծ

Հավելված

Երևան քաղաքի ավագանու
2026 թվականի մարտի __-ի
N__-Ա որոշման

ԵՐԵՎԱՆԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ 2025 ԹՎԱԿԱՆԻ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Երևանի զարգացման 2025 թվականի ծրագրի իրականացման հաշվետվություն

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Երևանի զարգացման 2025 թվականի ծրագրի իրականացման հաշվետվությունը (այսուհետ՝ Հաշվետվություն) նպատակ ունի համապարփակ, համակարգված և տվյալահեն ձևով ներկայացնել ծրագրով սահմանված ռազմավարական ուղղությունների, միջոցառումների և նախաձեռնությունների կատարման ընթացքն ու արդյունքները՝ արտացոլելով հաշվետու տարվա ընթացքում իրականացված աշխատանքները, ձեռքբերումները, ընթացքի մեջ գտնվող գործընթացները և քաղաքային զարգացման հիմնական միտումները:

2025 թվականին Երևանի քաղաքապետարանը և ենթակա կառույցները շարունակել են քաղաքային զարգացման ռազմավարական օրակարգի հետևողական իրականացումը՝ կենտրոնանալով քաղաքային միջավայրի որակի բարձրացման, ենթակառուցվածքների արդիականացման, սոցիալական բարեկեցության և մարդկային կապիտալի զարգացման, թվային փոխակերպման, շրջակա միջավայրի պահպանության, ինչպես նաև կառավարման համակարգերի ինստիտուցիոնալ ամրապնդման վրա: Ծրագրի իրականացումն ուղղված է եղել քաղաքային զարգացման երկարաժամկետ տեսլականի ապահովմանը՝ հիմք ընդունելով կայուն զարգացման, ներառականության, արդյունքահեն կառավարման և հանրային արժեքի ստեղծման սկզբունքները:

Հաշվետվությունը ձևավորված է Երևանի զարգացման 2025 թվականի ծրագրի կառուցվածքային տրամաբանության հիման վրա և ամփոփում է ոլորտային ստորաբաժանումների կողմից ներկայացված կատարողական տվյալների սինթեզը՝ մոնիտորինգի, գնահատման և հաշվետվողականության ժամանակակից մոտեցումների կիրառմամբ: Փաստաթուղթը ներկայացնում է ոչ միայն իրականացված գործողությունները, այլ նաև դրանց կապը ռազմավարական նպատակների, ծրագրային առաջնահերթությունների և ակնկալվող արդյունքների հետ՝ ապահովելով քաղաքային զարգացման քաղաքականությունների և կառավարման գործընթացների թափանցիկություն, հաշվետվողականություն և որոշումների կայացման տվյալահեն հիմք: 2025 թվականը հանդիսանում է համակարգային անցման տարի, որի ընթացքում ամրագրվել են քաղաքային զարգացման ծրագրերի կառավարման նոր մոտեցումները, ներդրվել են ծրագրային պլանավորման և հաշվետվողականության գործիքներ, ինչպես նաև ձևավորվել են ինստիտուցիոնալ և մեթոդաբանական հիմքեր՝ հաջորդիվ համակարգերի լիարժեք կիրառման համար:

Այս համատեքստում հաշվետվությունը ոչ միայն ամփոփում է հաշվետու տարվա իրականացված աշխատանքները, այլև ծառայում է որպես ռազմավարական հիմք՝ 2026 թվականից ծրագրային բյուջետավորման, մոնիտորինգի և գնահատման ամբողջական համակարգի գործարկման և քաղաքային կառավարման շարունակական կատարելագործման համար:

1.ՔԱՂԱՔԱՅԻՆ ՊԼԱՆԱՎՈՐՈՒՄ ԵՎ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅՈՒՆ

2025 թվականի ընթացքում իրականացվել են Երևանի գլխավոր հատակագծի GIS հարթակին ինտեգրման գործընթացի նախապատրաստական և ինստիտուցիոնալ հիմքերի ձևավորման աշխատանքներ: Գործընթացի շրջանակում նախատեսվել է նաև մասնագիտական կարողությունների զարգացում՝ GIS համակարգերի կիրառման, տարածական տվյալների կառավարման և թվային քաղաքաշինական գործիքակազմի օգտագործման ուղղություններով, որի նպատակն է ապահովել համակարգի արդյունավետ ներդրման համար անհրաժեշտ մարդկային կապիտալի պատրաստվածությունը:

Նշված աշխատանքները հիմք են հանդիսանում Երևանի գլխավոր հատակագծի տվյալների թվայնացման, տարածական վերլուծության և ինտեգրված քաղաքաշինական պլանավորման համակարգի ձևավորման համար՝ ապահովելով քաղաքային զարգացման գործընթացների տվյալահեն, ինստիտուցիոնալ և տեխնոլոգիական կառավարում:

Շարունակվել են ռենովացիայի ծրագրերի իրագործմանն ուղղված հայեցակարգային մոտեցումների մշակման, ինչպես նաև օրենսդրական և ինստիտուցիոնալ հիմքերի ձևավորման աշխատանքները՝ ՀՀ կառավարության իրավասու մարմինների հետ համակարգված համագործակցության շրջանակում:

Մասնավորապես՝ ՀՀ կառավարության միջոցառումների ծրագրի շրջանակներում պլանավորված է «Ռենովացիայի մասին» ՀՀ օրենքի մշակումը, որի պատասխանատու մարմինը հանդիսանում է Քաղաքաշինության կոմիտեն: Այդ համատեքստում առաջարկվել է Երևանի մասով ռենովացիայի հիմնական ուղղություններով ձևավորված առաջարկությունների փաթեթը վերջնականացնել և ներկայացնել Քաղաքաշինության կոմիտե, արդեն առարկայական նախագծային և ծրագրային լուծումների փուլին անցնելու նպատակով:

Ռենովացիայի ծրագրային գործնական կիրառման շրջանակում իրականացվում է Արզումանյան 10 և 17 հասցեների շենքերի տեղում նոր կառուցապատման և վերաբնակեցման ծրագիրը: Ծրագիրն իրականացվում է ՀՀ կառավարության 13.04.2023թ. թիվ 530-Ն որոշման շրջանակում, որի համաձայն քանդման ենթակա սեփականության իրավունքով գրանցված անշարժ գույքերի ընդհանուր թիվը կազմում է 76 միավոր, այդ թվում՝ Արզումանյան 10 շենք՝ 37 բնակարան և 1 ավտոտնակ, և Արզումանյան 17 շենք՝ 36 բնակարան և 2 ավտոտնակ: Մինչ հաշվետու ժամանակահատվածը կնքվել են պայմանագրեր 62 անշարժ գույքերի վերաբերյալ: Նշված 62 անշարժ գույքերը սեփականության իրավունքով գրանցվել են Երևան համայնքի անունով: Մնացած 13 սեփականատերերի գործերը գտնվում են Երևանի քաղաքի ընդհանուր իրավասության առաջին ատյանի քաղաքացիական դատարանում:

Ծրագրի իրականացման գործընթացում իրականացվել են նաև տարածքի նախապատրաստական աշխատանքներ, այդ թվում՝

- ապամոնտաժվել են Արզումանյան 10 շենքի բակում առկա ինքնակամ կառուցված ավտոտնակները,
- շենքի առավել ոխկային հատվածի (1-ին մուտք) թվով 4 բնակիչներին տրամադրվել է ժամանակավոր վարձակալության ֆինանսավորում Երևան համայնքի կողմից՝ մինչև

ծրագրի շինարարական փուլի մեկնարկը:

Նշված գործընթացները ձևավորում են ռենովացիայի ծրագրերի գործնական, իրավական և ինստիտուցիոնալ մոդելի նախադեպային հիմքը, որը հետագա փուլերում կծառայի որպես քաղաքային տարածքների վերազարգացման համակարգային քաղաքականության մաս՝ ապահովելով տարածքային արդիականացում, սոցիալական պաշտպանվածություն, քաղաքաշինական միջավայրի որակի բարձրացում և կայուն զարգացման սկզբունքների ներդրում:

Քաղաքաշինական համալիր պլանավորման համատեքստում իրականացվել է Աջափնյակ վարչական շրջանում քաղաքաշինական ներդրումային ծրագրի նախապատրաստական և կազմակերպչական աշխատանքներ, որոնք նպատակ ունեն ապահովել տարածքի համալիր և հավասարակշռված զարգացումը, բարձրացնել քաղաքաշինական պլանավորման որակը և ստեղծել ներդրումային նախաձեռնությունների իրականացման համար անհրաժեշտ ինստիտուցիոնալ և մեթոդաբանական հիմքերը՝ ներառյալ հանրային տարածքների կազմակերպման, շարժունակության և մատչելիության լուծումները, ինչպես նաև ծրագրի տնտեսական իրագործելիության գնահատումը: Այդ նպատակով 2025 թվականի դեկտեմբերին հրապարակվել է քաղաքաշինական հայեցակարգի մշակման մրցույթ երկփուլ ընթացակարգով: Երկփուլ մրցութային ընթացակարգի կիրառումը հնարավորություն է տալիս նախնական փուլում ներգրավել բարձր մասնագիտական կարողություններ ունեցող մասնակիցների և ստանալ տարբեր հայեցակարգային մոտեցումներ, իսկ երկրորդ փուլում՝ դրանց խորացված մշակման և մրցակցային գնահատման միջոցով ընտրել առավել հիմնավորված, իրագործելի և երկարաժամկետ զարգացման նպատակներին համապատասխան լուծումը:

Տարեվերջը նշանավորվեց նաև քաղաքի համար մեծ կարևորություն ունեցող՝ «Կասկադ» համալիրի անավարտ հատվածի վերակառուցման՝ «Կասկադ մշակութային հանգույց» նախագծի իրականացման պայմանագրի ստորագրմամբ: Նոր կառուցվող հատվածում տեղակայված կլինի 1000 տեղանոց համերգասրահ, ժամանակակից արվեստի թանգարան՝ հագեցած նոր ցուցասրահներով: Կձևավորվի մշակութային և ժամանցային նոր հանգույց՝ մոտավորապես 30 հազար քմ-ից ավելի տարածքով:

Իրականացվել են քաղաքային զարգացման ռազմավարական նշանակության մի շարք տարածքների օտարման և նախապատրաստական գործընթացներ՝ ուղղված խոշոր քաղաքաշինական ծրագրերի իրականացման համար անհրաժեշտ իրավական, ինստիտուցիոնալ և տարածքային հիմքերի ձևավորմանը:

Ակադեմիական քաղաքի տարածքում իրականացվել է օտարման գործընթացների նախապատրաստական ամբողջական փաթեթ: Մասնավորապես, կատարվել է տարածքում առկա թվով 27 օրինական գույքերի հաշվառում, ինչպես նաև 23 գույքերի գնահատման խորհրդատվական ծառայությունների գնման գործընթաց: Զուգահեռաբար մեկնարկել է օտարվող գույքերի սեփականատերերի հետ բանակցային փուլը, որի արդյունքում կազմվել են գույքերի նկարագրության արձանագրություններ:

Գլխավոր պողոտայի տարածքում օտարման գործընթացն իրականացվել է մասնակի ձևաչափով: Տարածքում առկա 151 օտարման ենթակա գույքերից 103-ի մասով նախկինում

պայմանագրեր են կնքվել ձեռքբերող ընկերությունների կողմից: Միաժամանակ իրականացվել են համայնքային հողամասերի փոխանցման, դատավարական և կառուցապատման գործընթացներ: Ներկայում առկա է թվով 26 դատական գործ, որոնցից մեկի մասով Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի կողմից 22.11.2024թ. կայացվել է վճիռ, որը դեռևս օրինական ուժի մեջ չի մտել և բողոքարկվել է ՀՀ վճռաբեկ դատարան:

Բացի այդ, նոր հայտնաբերված երեք գույքերի վերաբերյալ ընդունվել է հանրային գերակա շահի նոր որոշում՝ Արամի 7 բն. 1, Արամի 29/4 և Արամի 27/1 հասցեների մասով, իսկ Արամի 29/5 հասցեի վերաբերյալ կառավարության որոշման նախագիծը գտնվում է շրջանառության մեջ:

Ֆիրդուս 33-րդ թաղամասում օտարման գործընթացներն իրականացվել են ՀՀ կառավարության որոշմամբ սահմանված կարգով, կազմվել են թվով 209 գույքերի նկարագրության արձանագրություններ: ՀՀ կառավարության որոշմամբ հանրային գերակա շահ է ճանաչվել նախկինում չօտարված թվով 19 գույքի նկատմամբ: Նշված 19 գույքերից 16-ն արդեն օտարվել են կառուցապատողին:

Տարածքում առկա է նաև թվով 10 դատական գործ: Բացի այդ, նույն որոշման շրջանակում կազմվել է ևս 6 նկարագրության արձանագրություններ նոր հայտնաբերված 20 գույքերի մասով, որոնց վերաբերյալ ուղարկվել են համապատասխան ծանուցումներ:

2. ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐ ԵՎ ՇԱՐԺՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆ

Իսակով – Արշակունյաց ճանապարհահատվածի կառուցման ծրագրի նպատակն է բարելավել մայրաքաղաքի ենթակառուցվածքները՝ ապահովելով անվտանգ և հարմարավետ երթևեկություն, բարձրացնելով ճանապարհահատվածի որակն ու բարելավելով սոցիալական միջավայրը: Ծրագրի մեկնարկից ի վեր ապահովվել են հիմնական մրցույթները՝ ներառյալ ծրագրի ֆինանսական աուդիտը, օտարման գործընթացի արտաքին մոնիտորինգը, հաղորդակցության ռազմավարության և վեբ-կայքի մշակման մրցույթը, ինչպես նաև շինարարական և տեխնիկական հսկողության մրցույթները: Մեկնարկել և ավարտական փուլին են հասել օտարման գործընթացները, որոնց մասով աշխատանքները կշարունակվեն նաև 2026 թվականին, ինչը կապահովի շինարարության անվտանգ մեկնարկը: Շինարարական մրցույթի արդյունքների հիման վրա շինարարական կազմակերպությունը հրավիրվել է պայմանագրի բանակցությունների, իսկ ինժեներ-խորհրդատուի մրցույթի գնահատումն ընթացքում է: Այս քայլերը ապահովում են ծրագրի թափանցիկ իրականացման, մրցակցային գործընթացների և քաղաքային միջավայրի բարելավմանն ուղղված ծրագրի սահուն իրականացումը:

Թբիլիսյան–Եղվարդ ճանապարհահատվածի կառուցման նպատակով բանակցություններ են տարբել Ասիական զարգացման բանկի գործընկերների հետ, որի արդյունքում ներգրավվել է միջազգային խորհրդատվական կազմակերպություն՝ ծրագրի իրագործելիության ուսումնասիրության կատարման համար: Հաշվետու ժամանակահատվածում կատարվել է նաև տեղանքի և ռելիեֆի վերլուծություն, ինչպես նաև 100 մետր լայնությամբ ծրագրից ենթակա տարածքում գտնվող գույքերի վերաբերյալ տեղեկատվության հավաքագրում: Միաժամանակ

մշակվել և բանկի հետ համաձայնեցվել է հանրային ներդրումային ծրագրի ձևաչափը, վարկային շրջանակը, համաձայնագրի կնքման գործողությունների պլան-ժամանակացույցը՝ ծրագրի արդյունավետ և համակարգված իրականացում ապահովելու համար:

Ուլնեցի-Ռուբինյանց ավտոճանապարհի վերջնամասից մինչև Աճառյան փողոց երկաթգծի ծրագծով ավտոճանապարհի կառուցման տվյալահեն փաստաթղթեր ապահովելու նպատակով հայտարարվել է տեխնիկատնտեսական ուսումնասիրության իրականացման մրցույթ: Մրցույթում հաղթող ճանաչված խորհրդատվական կազմակերպության համատեղ աշխատանքներ են տարվել տեղեկատվության հավաքագրման, հնարավոր սցենարների քննարկման ուղղությամբ: Ուսումնասիրության արդյունքների հիման վրա նախատեսվում է մշակել հանրային ներդրումային ծրագիր և ներկայացնել ՀՀ կառավարության քննարկմանը:

Կարևորելով էլեկտրատրանսպորտի դերը քաղաքի կյանքում՝ 2025թ. տարեվերջից մեկնարկել է «YUTONG» մակնիշի թվով 45 նոր և ժամանակակից տրոլեյբուսների ձեռքբերման գործընթացը և սպասվում է, որ արդեն 2026թ. առաջին եռամսյակի վերջերին դրանք կսկսվեն շահագործվել: Մայրաքաղաքում իրականացվող տրանսպորտային բարեփոխումները պահանջում են ժամանակին ու նոր ներմուծվող տրանսպորտային միջոցներին համահունչ արդիականացնել նաև էլեկտրամատակարարման համակարգերը, օժանդակ տնտեսությունը, վերանորոգման համար անհրաժեշտ տեխնիկական և ընդհանրապես ողջ տնտեսությունն ամբողջությամբ: Այս գործընթացը խիստ ծախսատար է: Այդ իսկ պատճառով աշխատանքները հնարավոր է իրականացնել միայն փուլային եղանակով: Նախատեսվում է ըստ առաջնահերթության ընտրել և վերականգնել առավել խոցելի օբյեկտները և այսպիսով մաս-մաս լուծել ընկերության առաջ ծառայած բոլոր հիմնախնդիրները:

Հարկ է նշել, որ 2025 թվականի ընթացքում լուրջ ներդրումներ են կատարվել ոլորտի զարգացման համար. Իրականացվել է տրոլեյբուսների սնուցման քարշի ենթակայանների արդիականացման և հեռակառավարման աշխատանքներ, տեղադրվել են տեսախցիկներ, սարքավորումներ և այլն:

Նոր ներդրված համակարգի օգնությամբ կարգավար-օպերատորների կողմից իրականացվում է ենթակայանների շուրջօրյա հսկողություն: Անսարքություններ հայտնաբերելիս անմիջապես տեղեկացնում են վերանորոգող բրիգադին, որոնց կողմից ձեռնարկվում է բոլոր հնարավոր միջոցները՝ խափանումները վերացնելու և էլեկտրատրանսպորտի անխափան աշխատանքը վերականգնելու համար: Նոր տեխնոլոգիաների ներդրումը, ք/ենթակայանների արդիականացումը զգալիորեն նվազեցրել են ընկերության ծախսերի չափը:

Կատարվել են Մյասնիկյան-Աճառյան փողոցների հպակային ցանցի վերակառուցման աշխատանքներ, հին հենասյուների վրայից ապամոնտաժվել է նշված փողոցների հպակային ցանցը և տեղափոխվել նոր տեղադրված հենասյուների վրա:

Մեկնարկել է էլեկտրական քաղաքային լուծումներ և շարժունակության խթանում ծրագիրը, որի իրագործելիության ուսումնասիրության և հայեցակարգային նախագծի մշակման նպատակով

Ասիական զարգացման բանկի աջակցությամբ ներգրավվել է միջազգային խորհրդատվական կազմակերպություն: Ծրագրի շրջանակում նախատեսվում է 2 դեպոնների կառուցման և թվով 250 18 մետրանոց հողակապված էլեկտրական ավտոբուսների ձեռքբերում, որոնք կգործարկվեն Երևանի նոր հանրային տրանսպորտային ցանցի հիմնական երթուղիներում: Խորհրդատուի կողմից ներկայացվել է առաջին մեկնարկային հաշվետվությունը, որն ուղեցույց է հանդիսացել ծրագրի հետագա զարգացումների համար: Զուգահեռաբար մշակվել է նաև հանրային ներդրումային ծրագիր, որը ներկայացվել է ՀՀ կառավարության քննարկմանը՝ ծրագրի հետագա առաջխաղացումն ապահովելու նպատակով:

Մետրոյի «Աջափնյակ» կայարանի կառուցման ծրագիրը հանդիսանում է Երևանի տրանսպորտային համակարգի զարգացման կարևորագույն ռազմավարական նախաձեռնություններից մեկը՝ ուղղված մայրաքաղաքի արևմտյան հատվածի տրանսպորտային հասանելիության էական բարելավմանը, երթևեկության բեռնաթափմանը և հանրային տրանսպորտի գրավչության բարձրացմանը: Ծրագիրը միտված է ապահովել արագ, անվտանգ և կայուն շարժունակություն՝ համահունչ Երևանի երկարաժամկետ տարածքային և սոցիալ-տնտեսական զարգացման նպատակներին:

2025 թվականին ծրագրի շրջանակում ավարտվել է «Աջափնյակ» կայարանի նախագծման փուլը, ստացվել են նախագծի պարզ փորձաքննության, պետական համալիր փորձաքննության և շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման (ՇՄԱԳ) դրական եզրակացությունները:

Միաժամանակ մշակվել է հանրային ներդրումային ծրագիրը՝ ներառյալ տնտեսական մոդելի մանրամասն գնահատումը, որի արդյունքում ՀՀ ֆինանսների նախարարության կողմից ստացվել է դրական դիրքորոշում: Ծրագիրը պատրաստվել է ՀՀ վարչապետի ղեկավարությամբ գործող Հանրային ներդրումային կոմիտեի քննարկմանը ներկայացնելու համար:

Ծրագրի իրագործման նախապատրաստական փուլում իրականացվել է ազդեցության ենթակա տարածքի ուսումնասիրություն և գույքերի վերաբերյալ ելակետային տեղեկատվության հավաքագրում, ինչպես նաև շրջանառության մեջ է դրվել ՀՀ կառավարության գերակա հանրային շահի վերաբերյալ որոշման նախագիծը՝ օտարման գործընթացների իրավական հիմքերի ապահովման նպատակով:

Մետրոյի «Սուրմալու» կայարանի կառուցման նպատակն է ապահովել մայրաքաղաքի կենտրոնական հատվածի տրանսպորտային հասանելիության բարելավումը, հանրային տրանսպորտի դերակատարության ամրապնդումը և հարակից տարածքների համալիր քաղաքաշինական վերակազմավորումը: Ծրագրի իրականացման համար դիտարկվում է համայնք-մասնավոր գործընկերության մոդելը՝ նպատակ ունենալով ներգրավել մասնավոր ներդրումներ և ապահովել ծրագրի ֆինանսական կայունությունը:

Նախագծանախահաշվային փաթեթի պատվիրման համար տվյալահեն փաստաթղթեր ստեղծելու նպատակով 2025 թվականին հայտարարվել է ծրագրի տեխնիկատնտեսական ուսումնասիրության իրականացման մրցույթ: Միաժամանակ մշակվել է կայարանի հարակից տարածքի քաղաքաշինական հայեցակարգի մշակման մրցույթային փաթեթը՝ կայարանի

կառուցումը համադրելու տարածքի ներդրումային և ֆունկցիոնալ զարգացման հետ: Ծրագրի նախապատրաստական փուլում իրականացվել են նաև տեղանքում գտնվող գույքերի ելակետային ուսումնասիրություններ՝ ապագա նախագծման և ներդրումային գործընթացների համար անհրաժեշտ տվյալների հավաքագրման նպատակով: Քաղաքաշինական հայեցակարգի մշակման մրցույթը նախատեսվում է հրապարակել 2026 թվականի առաջին եռամսյակում: Այս փաստաթղթերի հիման վրա էլ կմեկնարկեն նախագծի պատվիրման աշխատանքները:

Երևանի մետրոպոլիտենի արդիականացման ծրագիրը հանդիսանում է մայրաքաղաքի հանրային տրանսպորտի համակարգի կայուն զարգացման առանցքային ռազմավարական ուղղություններից մեկը՝ ուղղված գործող ենթակառուցվածքների հուսալիության բարձրացմանը, անվտանգ շահագործման ապահովմանը և սպասարկման որակի բարելավմանը: Ծրագիրը նպատակ ունի ապահովել մետրոպոլիտենի երկարաժամկետ արդյունավետ շահագործում՝ համահունչ ժամանակակից տեխնիկական, էներգախնայող և անվտանգության պահանջներին:

2025 թվականին իրականացվել է մետրոպոլիտենի արդիականացման հանրային ներդրումային ծրագրի մշակում՝ ներառյալ տնտեսական մոդելի համապարփակ գնահատումը և ֆինանսական արդյունավետության վերլուծությունը: Մշակված ծրագրի հիման վրա ՀՀ ֆինանսների նախարարության կողմից ստացվել է դրական դիրքորոշում՝ հաստատելով ծրագրի նպատակահարմարությունն ու ֆինանսական հիմնավորվածությունը:

Միաժամանակ իրականացվել են նախապատրաստական աշխատանքներ՝ ծրագիրը ՀՀ վարչապետի գլխավորությամբ գործող Հանրային ներդրումային կոմիտեի քննարկմանը ներկայացնելու նպատակով: Ծրագրի հաստատումը հիմք կստեղծի հաջորդ փուլում իրականացնել մետրոպոլիտենի շարժակազմի, ինժեներական համակարգերի, ազդանշանային և էներգամատակարարման ենթակառուցվածքների արդիականացման միջոցառումներ՝ ապահովելով անվտանգ, հուսալի և բարձրորակ հանրային տրանսպորտային ծառայություն Երևանի բնակիչների համար:

Բնակիչների համար անվտանգ և հարմարավետ պայմաններ ապահովելու նպատակով՝ 2025 թվականին շարունակվել է մայրաքաղաքի բազմաբնակարան շենքերում շահագործվող ավելի քան 40 տարվա վաղեմություն ունեցող վերելակների փոխարինման ծրագիրը: Տարվա ընթացքում փոխարինվել է թվով 504 վերելակ: Տեղադրվող նոր վերելակները հարմարեցված են տեսողության, լսողության և հենաշարժողական խնդիրներ ունեցող անձանց գործածությանը:

Տարվա ընթացքում թվով 23 հասցեներում կառուցվել/վերակառուցվել են մոտ 9702 ԳԾՄ կոյուղատար և հեղեղատար համակարգեր, ձեռք է բերվել 15 հատ աղբատար մեքենա, 12 հատ հատուկ նշանակության կոմունալ մեքենաներ, 2000 հատ կենցաղային աղբի համար նախատեսված 1100 լիտր տարողությամբ կոնտեյներներ, տարբեր վարչական շրջաններում գտնվող 250 տեղերում կենցաղային աղբի համար նախատեսված 559 հատ 1100 լիտր տարողությամբ կոնտեյներների համար իրականացվել են հարթակների կառուցման աշխատանքներ:

Նպատակ ունենալով ձևավորել բազմաբնակարան շենքերի կառավարման արդյունավետ, թափանցիկ և հաշվետու համակարգ, բարձրացնել կառավարման որակը, հստակեցնել պատասխանատվությունների շրջանակները և ապահովել բնակիչների իրավունքների և շահերի պաշտպանությունը՝ Քաղաքաշինության կոմիտեի հետ համատեղ քննարկման փուլում է գտնվում բազմաբնակարան շենքերի կառավարման մասին նոր օրենքի նախագիծը:

Համայնքային էներգետիկ կառավարման համակարգի ներդրման շրջանակներում համայնքի տարածքում էներգետիկ հոսքերը վերահսկելու, կառավարելու և մոնիթորինգի ենթարկելու նպատակով շարունակում է գործարկվել էներգիայի կառավարման տեղեկատվական համակարգը: Համակարգի գործարկմամբ կապահովվի համայնքի էներգետիկ կառավարման կայունությունը՝ նվազագույնի հասցնելով գործող համակարգերի ազդեցությունը շրջակա միջավայրի վրա, ապահովելով նաև տնտեսական օգուտներ համայնքային բյուջեի կառավարման համար:

2025 թվականի ընթացքում շարունակվել է Երևան քաղաքի արտաքին լուսավորության համակարգի արդիականացման, էներգաարդյունավետության բարձրացման և կառավարման համակարգերի թվայնացմանն ուղղված աշխատանքները՝ ապահովելով քաղաքային միջավայրի անվտանգ և որակյալ լուսավորություն երեկոյան ժամերին:

Արտաքին լուսավորության արդիականացման շրջանակում իրականացվել է 12 894 միավոր նատրիումական լուսատուների փոխարինում ժամանակակից ԼԵԴ լուսատուներով, ինչի արդյունքում բարելավվել է լուսավորության որակը, միաժամանակ ապահովվել է էլեկտրաէներգիայի սպառման էական կրճատում: ԼԵԴ լուսատուներով վերազինվել է 82 փողոց, ինչպես նաև լուսավորվել են 35 հանրային տարածքներ, այդ թվում՝ այգիներ, բակային տարածքներ, մշակութային հատուկ պահպանվող տարածքներ և համայնքային ենթակառուցվածքներ:

Արտաքին լուսավորության համակարգի հուսալիության և անվտանգության բարձրացման նպատակով իրականացվել է 82.08 կմ երկարությամբ մալուխային ցանցի կապիտալ փոխարինում և նորի կառուցում: Միաժամանակ, հնացած ենթակառուցվածքների արդիականացման շրջանակում փոխարինվել է 276 հին ուժային պահարան, որոնք համալրվել են ժամանակակից սարքավորումներով: Դրանցից 190 ուժային պահարան լրացուցիչ համալրվել են հեռակառավարման (CBOX) մոդուլներով, ինչի արդյունքում հեռակառավարման համակարգով ընդգրկված ուժային պահարանների ընդհանուր թիվը հասել է մոտ 490-ի:

Վերականգնվող էներգիայի կիրառման շրջանակում արևային պանելների կայանի միջոցով 2025 թվականի հունվարից մինչև դեկտեմբերի 1-ը արտադրվել է ավելի քան 220 հազար կՎտ·ժ էլեկտրաէներգիա, ինչը նպաստում է համայնքային ենթակառուցվածքների էներգետիկ ինքնաբավության և կայուն զարգացման նպատակների իրականացմանը:

Միաժամանակ իրականացվել են «Երթաղլույս» ՓԲ ընկերության ներքին վարչարարության, կառավարման և վերահսկողության գործընթացների թվայնացման աշխատանքներ, ներդրվել է ներքին կառավարման և վերահսկողության էլեկտրոնային համակարգ, որն ուղղված է կազմակերպության գործառնական արդյունավետության բարձրացմանը, գործընթացների

թափանցիկության ապահովմանը և կառավարչական որոշումների տվյալահեն ընդունմանը:

Իրականացվել են Բագրատունյաց և Գ. Նժդեհի փողոցների բազմաբնակարան շենքերի գեղարվեստական լույսերի լուսատուների փոխարինման աշխատանքներ, որի արդյունքում փոխարինվել է 3000 հատ լուսատու:

Ա. Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի ազգային ակադեմիական թատրոնի շենքի գեղարվեստական լուսավորության արդիականացման աշխատանքներն ևս ավարտված են:

Երևան քաղաքի կամուրջների, ուղեանցերի, վերգետնյա անցումների և կամրջային կառույցների շահագործման, պահպանման և սպասարկման աշխատանքներն ամբողջությամբ ավարտված են:

Երևանի էներգաարդյունավետության ծրագրի շրջանակում թվով 47 հանրային շենքերում իրականացվել է ֆոտովոլտային վահանակների, արևային ջրատաքացուցիչների և լուսադիոդային լուսատուների մատակարարում և տեղադրում: Մեկնարկել են Երևանի հ.156 մանկապարտեզի կառուցման շինարարական աշխատանքները՝ սեյսմիկ արդիականացման տեխնոլոգիաների և էներգաարդյունավետ լուծումների կիրառմամբ: Ավարտվել են շենքի հիմնային, իսկ նկուղային հարկի բետոնացման աշխատանքները: Ներկայում իրականացվում են առաջին հարկի ծածկի բետոնացման աշխատանքները:

2025 թվականին Երևանի էներգաարդյունավետության ծրագրի երկրորդ փուլի շրջանակում միջազգային ընթացակարգերով կազմակերպվել և իրականացվել են երեք մանկապարտեզների և երեք առողջապահական կենտրոնների նախագծման խորհրդատվական ծառայությունների մրցույթները, ինչպես նաև յոթ մանկապարտեզների շինարարական աշխատանքների և տեխնիկական հսկողության խորհրդատվական ծառայությունների մրցույթները: Միաժամանակ ազգային ընթացակարգով իրականացվել են ևս յոթ մանկապարտեզների նախագծման խորհրդատվական ծառայությունների մրցույթները: Տարվա ընթացքում կնքվել են չորս մանկապարտեզների նախագծային ծառայությունների պայմանագրեր, նախագծման աշխատանքները մեկնարկել են:

Նոր բազմաֆունկցիոնալ բժշկական կենտրոնի կառուցման նպատակով այլընտրանքային ֆինանսավորման մեխանիզմների ուսումնասիրության, ինչպես նաև տեխնիկատնտեսական ուսումնասիրության և հայեցակարգային նախագծի մշակման ուղղությամբ տարվել են բանակցություններ, պաստրաստվել և նախագծային առաջարկներ են ներկայացվել զարգացման գործընկերների և միջազգային ֆինանսական գործընկերի հետ:

Կենդանիների խնամքի կենտրոնի տարածքում Շների կացարանի կառուցման նախագիծը, ՀՀ քաղաքաշինության կոմիտեի կողմից ստանալով պետական համալիր փորձաքննության դրական եզրակացությունը, ներկայացվել է շինարարության մրցույթի հայտարարման: Շինարարական աշխատանքները կմեկնարկեն 2026 թվականին:

Քաղաքային հանրային տարածքների բարեկարգման և կանաչ գոտիների զարգացման ուղղությամբ իրականացվել են լայնածավալ աշխատանքներ: Ավարտվել են Նոր Նորք վարչական շրջանի Սբ. Սարգիս եկեղեցու և Դ. Բեկի փողոցի միջնամասի այգու բարեկարգման

աշխատանքները, Նոր Նորքի 2-րդ զանգվածի Վերածննդի այգու կառուցապատումը, և Դավթաշեն 1-ին և 2-րդ թաղամասերի միջև գտնվող կենտրոնական այգու կառուցապատման աշխատանքները: Ընթացքի մեջ են Երկրորդ աշխարհամարտում տարած հաղթանակի 40-ամյակի այգու հուշարձանի և հարակից տարածքի բարեկարգման աշխատանքներն և Երևանի բուսաբանական այգու տարածքում անտառապուրակի կառուցապատման աշխատանքները:

Շարունակական է արտադպրոցական, մշակութային և նախադպրոցական հաստատությունների վերանորոգման և հիմնանորոգման գործընթացը:

Ընդհանուր առմամբ 2021-2024 թթ. ընթացքում հիմնանորոգվել, կառուցվել կամ վերակառուցվել է թվով 36 մանկապարտեզ: 2025 թվականին շահագործման է հանձնվել 3 մանկապարտեզ՝ հ.74, հ.77 և հ.138: 2024-2025 թթ. ընթացքում բարեկարգվել են 18 մանկապարտեզների բակեր, որոնցից 14-ն արդեն հանձնված են շահագործման, 3-ում աշխատանքներն ավարտական փուլում են (հ.77, հ.82, հ.161), իսկ հ.36 մանկապարտեզի բակի բարեկարգման աշխատանքներն ընթացքի մեջ են:

Առողջապահական ենթակառուցվածքների զարգացման ուղղությամբ իրականացվել են վերանորոգման և հիմնանորոգման աշխատանքներ. թիվ 5 պոլիկլինիկայի հիմնանորոգման աշխատանքները գտնվում են ավարտական փուլում:

Հաշվետու տարվա ընթացքում շարունակվել և ավարտին են հասցվել նաև դեռևս 2023 թվականին մեկնարկած՝ Լենինգրադյան փողոց 16 հասցեի վարչական շենքի վերակառուցման աշխատանքները, որը ձևավորվել է որպես Երևանի երթևեկության կառավարման կենտրոն:

Հաշվետու ժամանակահատվածում շարունակվել են հանրային բաց տարածքների, բակերի և մարզական ենթակառուցվածքների բարեկարգման և արդիականացման աշխատանքները՝ ուղղված երեխաների, երիտասարդների և տարբեր տարիքային խմբերի համար անվտանգ, ներառական և ակտիվ հանգստի միջավայրի ձևավորմանը:

«Կերոն» հիմնադրամի հետ համագործակցությամբ Երևանի օղակաձև զբոսայգում կառուցվել է համընդհանուր և անվտանգ մանկական խաղահրապարակ, որը նախատեսված է 5–13 տարեկան երեխաների համար: Խաղահրապարակը ներառում է խաղային և սպորտային գոտիներ, ինտելեկտուալ անկյուններ և հանգստի տարածքներ՝ ապահովելով ներառական և անվտանգ միջավայր տարբեր կարողություններով երեխաների համար:

Երևանի օղակաձև զբոսայգում նախատեսվել է նաև ժամանակակից և անվտանգ վորքաութ (workout) մարզահրապարակի ստեղծում, որը նախատեսված է բոլոր տարիքային խմբերի համար: Մարզահրապարակի համար հատկացվել է համապատասխան տարածք, իսկ ներկայումս ընթանում է նախագծման գործընթացը: Նախագիծը ներառում է մարզման գոտիներ, բացօթյա սպորտային սարքավորումներ, հանգստի վայրեր և հանրային միջոցառումների կազմակերպման հնարավորություններ:

«Ձոր Չոփկ» տարածքում իրականացվել են մարզահրապարակի վերանորոգման աշխատանքներ, իսկ մի շարք բակային տարածքներում իրականացվել են բարեկարգման և խաղասարքերի տեղադրման աշխատանքներ:

Երևան քաղաքում 2025 թվականի ընթացքում իրականացված բակային տարածքների, մարզական և հարակից ենթակառուցվածքների բարեկարգման աշխատանքներ՝ ըստ վարչական շրջանների

Վարչական շրջան	Հասցեներ	Իրականացված աշխատանքներ
Կենտրոն	Բրյուսով 165, Պուլչկին 43, Թումանյան 9ա, Տիգրան Մեծ 53, Խորենացի 47, Նալբանդյան 47	Բակային տարածքների վերանորոգում
Կենտրոն	Կոնդ-Լեո	Բակային աստիճանների վերանորոգում
Կենտրոն	Խորենացի 47, Կողբացի 2ա, Օղակաձև զբոսայգի (6-րդ հատված), Քաջագունի 14	Մանկական խաղասարքերի տեղադրում
Կենտրոն	Ծատուրյան 34, Մաշտոց 37, Սայաթ-Նովա 37, Աբովյան 39, Մաշտոց 51, Ամիրյան 18	Բակային բարեկարգում
Շենգավիթ	Բագրատունյաց 53, Շիրակի 2ա, Ս. Տարոնցու փող. վերջնամաս, Ալեքսիա 2/1, Ն. Շենգավիթ 11-րդ փող. 37/3, Շարուրի 28/2, Արշակունյաց 48/2, Գ. Նժդեհի 7	Բակերի համալիր բարեկարգում, ֆուտբոլի դաշտերի կառուցում
Շենգավիթ	Շիրակի 13, 15, Ալեքսիա 3, Շարուրի 23, 25, Եղբայրության 16, Ս. Տարոնցու նրբ. 11-13, Մանթաշյան 8, Եղիշե Թադևոսյան 8, Շիրակի 3-րդ օբյեկտ, Արշակունյաց 50/3	Բակերի բարեկարգում
Շենգավիթ	Եղիշե Թադևոսյան 11	Խոտի հոկեյի դաշտի կառուցում
Ավան	Չարենց թաղ. 12-13, 18, Դուրյան 48, Ավան-Առինջ 1-ին մկշր. 2/5, 1/7	Բակային հիմնանորոգում
Ավան	Աճառյան 22/11 – Շահինյան 1-ին նրբ.	Բակային կառուցում
Ավան	Իսահակյան թաղամաս	Զբոսայգու հիմնանորոգում, շների զբոսայգու կառուցում
Քանաքեռ-Զեյթուն	Գոգոլ 5ա, Զ. Սարկավազ 121/1, 125, 125/1, Մ. Մելիքյան 9/3, Մ. Ավետիսյան 4-րդ 18-20	Բակերի և հարակից տարածքների բարեկարգում
Քանաքեռ-Զեյթուն	Կ. Ուլենցու 3-րդ փակուղի 1, Ռուբինյանց 19/1	Ֆուտբոլի դաշտերի կառուցում
Նոր Նորք	Մոլդովական 29/5, 50/2, 15, Գալշոյան 4, 10, 12, Գյուլիքևիչյան 35, Բ. Մուրադյան 4, Բանավան 15, Զրվեժ, Մայակ 8	Բակերի բարեկարգում, խաղահրապարակների և ֆուտբոլի դաշտերի կառուցում/վերակառուցում
Նուբարաշեն	Նուբարաշեն 11-րդ 2, 12-րդ 4, 6-րդ 144, 6-րդ 112	Բակային բարեկարգում
Դավթաշեն	1-ին թաղ. 27-30, 20-23, 32, 33, 4-րդ թաղ. 32-34	Բակերի բարեկարգում, ֆուտբոլ/բասկետբոլի դաշտերի կառուցում/վերակառուցում
Դավթաշեն	Օֆելյա Համբարձումյան փող., Ա. Միկոյան ճեմնուղի	Սալիկապատում շուրջ 1 600 քմ, արտաքին լուսավորության ցանց
Դավթաշեն	6 հասցե	Կոյուղագծի վերակառուցում (մոտ 500 գծմ)

Արաբկիր	Վրացական 15 – 17, Մամիկոնյանց 45, Նիկողայոս Տիգրանյան 10	Բակային հիմնանորոգում
Արաբկիր	Գրիբոյեդով 31 – Մամիկոնյանց 35	Բակային տարածքի և ֆուտբոլի դաշտի հիմնանորոգում (ընթացքում)
Աջափնյակ	Բաշինջաղյան 173, Մարգարյան 2-րդ նրբ. 15, Մազմանյան 14, Մարգարյան 1-ին նրբ. 5, Հալաբյան 31, Ֆուչիկ 25/2, Նազարբեկյան 7, 13	Բակային հիմնանորոգում
Աջափնյակ	Նազարբեկյան 21, Հալաբյան 27, թիվ 168 դպրոցի մոտ	Ֆուտբոլի դաշտերի կառուցում
Աջափնյակ	Էստոնական – Լենինգրադյան	Ոռոգման ցանց (մոտ 1650 գծմ)
Նորք-Մարաշ	Գ. Հովսեփյան 91	Մինի ֆուտբոլի և բասկետբոլի դաշտերի կառուցում (ավարտ՝ 2026)
Նորք-Մարաշ	Գ. Հովսեփյան 24/30	Բակի բարեկարգում
Մալաթիա-Սեբաստիա	Շերամի 33-43, 49, 79, 7-9, 35-37, Սվաճյան 38, Բաբաջանյան 20, 39, 21, 5/1, Անդրանիկ 60, 67-69, 87, Օհանով 9, 11, Իսակով 26	Բակերի վերակառուցում
Էրեբունի	Մուրացան 113/1, 113/2, 113/3, Աթոյան անց. 1, Էրեբունի 21/1, 23, Արցախի պող. 10Վ, Խաղաղ Դոն 1, 19, 23, 27, 31	Բակային հիմնանորոգում

Իրականացված աշխատանքները նպաստել են բնակելի միջավայրի որակի բարելավմանը, համայնքային տարածքների անվտանգ և նպատակային օգտագործման ապահովմանը, ինչպես նաև երեխաների և երիտասարդների համար խաղային ու սպորտային հնարավորությունների ընդլայնմանը:

3.ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԲԱՐԵԿԵՑՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՄԱՐԴԿԱՅԻՆ ԿԱՊԻՏԱԼ

Տարբեր ոլորտներում՝ կրթությունից և առողջապահությունից մինչև մշակույթ, զբոսաշրջություն, սպորտ և երիտասարդական քաղաքականություն, իրականացվել են բազմաթիվ նախաձեռնություններ՝ ուղղված հանրային ծառայությունների որակի բարձրացմանը՝ ինչպես միջազգային գործընկերների հետ համագործակցությամբ, այնպես էլ համայնքի սեփական ռեսուրսների ներգրավմամբ:

3.1 Հանրակրթություն

Նախադպրոցական ուսումնական հաստատությունների կրթական միջավայրի բարելավման նպատակով 2025 թվականին հիմնանորոգված 7 մանկապարտեզների համար ներկայացվել են գնման հայտեր՝ նոր գույքի և անհրաժեշտ կենցաղային տեխնիկայի ձեռքբերման նպատակով, ինչի արդյունքում նշված մանկապարտեզները ամբողջությամբ համալրվել են համապատասխան գույքային և տեխնիկական միջոցներով:

Երևանի ենթակայության 42 մանկապարտեզների բոլոր թույլատրելի կառուցատարածքներում տեղադրվել են տեսախցիկներ՝ ապահովելով շուրջօրյա տեսահսկման համակարգի գործարկում: Զուգահեռաբար Երևանի ենթակայության երկու մանկապարտեզներում (հհ. 44 և 86) գործարկվել են Վաղ մանկության տարիքային մեկական խմբեր, որտեղ ապահովվել է անհրաժեշտ գույքային հագեցվածություն և շուրջօրյա տեսահսկում:

Ուսումնամեթոդական պարագաների ձեռքբերման շրջանակում Երևանի ենթակայության 40 մանկապարտեզների տրամադրվել է մարզական գույք, այդ թվում՝ մանկապարտեզներին բաշխվել են 50 բասկետբոլի հավաքածուներ, իսկ 10 մանկապարտեզների տրամադրվել են 20 բիզիբոլեր:

Դպրոցների կառավարման տեղեկատվական համակարգի գործարկման կատարելագործման նպատակով իրականացվել են շարունակական խորհրդատվություններ, որոնք կազմակերպվել են ամենամսյա պարբերականությամբ՝ Կրթության տեխնոլոգիաների ազգային կենտրոնի մասնագետների ներգրավմամբ: Զուգահեռաբար համակարգվել է «Պարտադիր կրթությունից դուրս մնացած երեխաների բացահայտման» էլեկտրոնային ենթահամակարգին հասանելիության ապահովումը:

«Մանկապարտեզ հերթագրման համակարգի» շրջանակում իրականացվել են անհատական աշխատանքներ առանձին մանկապարտեզների հետ՝ արտահերթության իրավունք ունեցող երեխաների հայտերի պատշաճ ներկայացման և համակարգային գրանցման ապահովման ուղղությամբ:

Երևանի ենթակայության բոլոր դպրոցների ներքին կարգապահական կանոններում ամրագրվել է

խելացի սարքավորումների բացառապես կրթական նպատակով օգտագործման դրույթը: Երևանի ենթակայության դպրոցներում շարունակվել է «Արմաթ» ինժեներական լաբորատորիաների գործարկումը, ապահովելով տեխնոլոգիական կրթության հասանելիություն ոչ միայն տվյալ դպրոցի, այլև հարակից ուսումնական հաստատությունների սովորողների համար: Ամփոփվել են մանկապարտեզների դաստիարակների մասնակցությամբ իրականացված ռոբոտաշինության դասընթացները, ինչպես նաև ներկայացվել են ռոբոտաշինության ծրագրի գործարկման արդյունքները: Ծրագիրն արդեն իրականացվում է 40 մանկապարտեզներում: Արտակարգ ընդունակություններով դպրոցականների հայտնաբերմանն ու խրախուսմանը միտված միջոցառումների շրջանակում կազմակերպվել են 2024–2025 ուսումնական տարվա դպրոցականների առարկայական օլիմպիադաների դպրոցական և քաղաքային փուլերը: Դպրոցական փուլին մասնակցել են 20 560 սովորող, իսկ քաղաքային փուլին մասնակցել են 2 585 սովորող, ընդհանուր առմամբ 321 սովորող արժանացել է դիպլոմների: Քաղաքային փուլի լավագույնների պարգևատրման շրջանակում 57 սովորող պարգևատրվել է 1-ին կարգի դիպլոմներով և 15 000 դրամ արժողությամբ նվեր-քարտերով, 100 սովորող՝ 2-րդ կարգի դիպլոմներով և 10 000 դրամ արժողությամբ նվեր-քարտերով, 164 սովորող՝ 3-րդ կարգի դիպլոմներով: Կազմակերպվել են նաև 2025–2026 ուսումնական տարվա օլիմպիադաների դպրոցական փուլերը և իրականացվել են մարզային փուլի նախապատրաստական աշխատանքները: Նախնական զինվորական պատրաստության հիմունքների ծրագրի շրջանակում Երևանի ենթակայությամբ գործող 12 միջնակարգ դպրոցների 10–12-րդ դասարանների շուրջ 420 աշակերտ ներգրավվել է կրթական ծրագրում, որի շրջանակում դաշտային պայմաններում իրականացվել են թեմատիկ դասընթացներ՝ զինատեսակների կիրառման, անվտանգության կանոնների, կրակային պատրաստության, դիտարկման դիրքերի և ինժեներական պատրաստության ուղղություններով: Ծրագրի ավարտին սովորողներին տրամադրվել է գործնական կրակային պատրաստության հնարավորություն:

Երևանի դպրոցականների զբոսաշրջային ծրագրի շրջանակում 7–9-րդ դասարանների շուրջ 650 աշակերտ մասնակցել է ճանաչողական այցելությունների՝ քաղաքի պատմամշակութային և ճարտարապետական կարևոր նշանակություն ունեցող օբյեկտներ: Ծրագրի ավարտին յուրաքանչյուր դպրոցից ընտրված սովորողները աշխատաժողովի ձևաչափով ներկայացրել են ծրագրի արդյունքները, գնահատականները և բարելավման առաջարկները:

Տարվա ընթացքում Երևանի ենթակայության դպրոցներում իրականացվել են գրական-ստեղծագործական միջոցառումներ, դպրոցների գրադարաններին նվիրաբերվել է շուրջ 300 օրինակ անգլերեն գրականություն: Կազմակերպվել են գրքերի քննարկումներ հեղինակների մասնակցությամբ և մասնագիտական համակարգմամբ:

Կազմակերպվել է արտագնա աշխատաժողով Երևանի ենթակայության դպրոցների տնօրենների մասնակցությամբ, որի շրջանակում քննարկվել են ոլորտային քաղաքականությանը, իրավակարգավորումներին և կառավարման գործընթացներին առնչվող հարցեր:

Կազմակերպվել է աշակերտական խորհուրդների նախագահների կարողությունների զարգացման եռօրյա դասընթաց, որին մասնակցել են ներկայացուցիչներ Երևանի

ենթակայության բոլոր դպրոցներից: Դասընթացի ավարտին փակ, գաղտնի քվեարկությամբ ձևավորվել է Երևանի քաղաքապետին կից աշակերտական խորհուրդ՝ յուրաքանչյուր վարչական շրջանից մեկական անդամով: Խորհրդի առաջին նիստը կայացել է դեկտեմբերի 17-ին՝ Երևանի քաղաքապետի նախագահությամբ:

Հանրային առողջապահության միջոցառումների շրջանակում պատրաստվել է առողջ ապրելակերպի խթանմանը միտված անիմացիոն տեսահոլովակ, ինչպես նաև կազմակերպվել են սեմինարներ Երևանի ենթակայության դպրոցների հոգեբանների մասնակցությամբ՝ սոցիալական թեմատիկ հոլովակների կիրառման ուղղությամբ:

Մանկավարժների արժևորմանը միտված միջոցառումների շրջանակում Երևանի ենթակայության դպրոցների շուրջ 50 մանկավարժական աշխատողներ խրախուսվել են դրամական պարգևներով: Համագործակցային ծրագրերի շրջանակում իրականացվել են ինչպես սովորողների արժեհամակարգի ձևավորմանը, այնպես էլ մանկավարժների մասնագիտական կարողությունների զարգացմանն ուղղված նախաձեռնություններ:

3.2 Առողջապահություն

2025 թվականի ընթացքում «դժվարամատչելի հետազոտություններ» ծրագրի շրջանակներում Երևան քաղաքի բնակիչներին տրամադրվել են թվով 20 հատ համակարգչային տոմոգրաֆիայի ուղեգրեր, թվով 70 հատ համակարգչային տոմոգրաֆիայի ուղեգրեր կոնտրաստ նյութով, թվով 85 հատ մագնիսառոգոնասային տոմոգրաֆիայի ուղեգրեր, թվով 118 հատ կորոնարոգրաֆիայի ուղեգրեր, թվով 95 հատ ստենտավորման ուղեգրեր և թվով 2 հատ շունտավորման ուղեգրեր: ստենտավորում մինչև 100 անձի համար:

Բուժօգնության և սպասարկման որակի և հասանելիության բարելավման նպատակով 2025 թվականի ընթացքում բժշկական և առողջության կենտրոններին անհատույց օգտագործման են տրամադրվել թվով 11 բժշկական ժամանակակից ու թանկարժեք սարքավորումներ:

3.3 Երեխաների և սոցիալական պաշտպանություն

Համայնքային սոցիալական ծառայությունների մատուցման նոր համակարգի ներդրման համար ստեղծվել են իրավական հիմքեր: Համակարգի ներդրումը կրելու է շարունակական բնույթ:

Երևան համայնքի վարչական շրջաններում երեխաներին լսելու համար հատուկ կահավորված սենյակներ հիմնելու նպատակով ներկայացվել է սենյակների 3D մոդելավորումը՝ միջազգային չափորոշիչներին համապատասխան: Ծրագրի 2-րդ և 3-րդ փուլերի իրականացումը նախատեսվում է 2026 թվականի ընթացքում: 2-րդ փուլով նախատեսվում է համապատասխան սենյակների վերանորոգում, կահավորում, երեխայի հետ աշխատելու անհրաժեշտ նյութերի, պարագաների ձեռքբերում, իսկ 3-րդ փուլով նախատեսվում է երեխայի վերաբերյալ հարցերի քննարկման ժամանակ օրենսդրությամբ ամրագրված երեխային լսելու իրավունքի իրացման համար մեթոդաբանություն մշակելու նպատակով փորձագետի ներգրավում:

Տարեցներին ուղղված սոցիալական աջակցության ծրագրերի շրջանակներում կազմակերպվել և իրականացվել են շրջագայություններ ՀՀ տեսարժան վայրեր: Ծրագիրն իրականացվել է ս.թ.

օգոստոսի 19-ից հոկտեմբերի 31-ը: Ծրագրի շրջանակներում կազմակերպվել են թվով 55 շրջագայություններ, որոնց մասնակցել են թվով 1100 շահառուներ:

Պատերազմից տուժած ընտանիքներին աջակցության տրամադրման կամ զինծառայության ընթացքում հաշմանդամություն ձեռքբերած զինծառայողների կենցաղային և բնակարանային պայմանների բարելավմանն ուղղված ծրագրերի իրականացման շրջանակներում տարվել են կարիքների գնահատման հետ կապված աշխատանքներ, որի արդյունքում իրականացվել է հողվածափոխություն՝ նախատեսված գումարը փոխանցելով «Հասարակական կազմակերպություններին աջակցություն» ծրագրի «Դրամական աջակցություն սոցիալական հարցերով զբաղվող հասակարակական կազմակերպություններին» ենթածրագրին:

3.4 Մշակույթ

Տարվա ընթացքում մշակույթի ոլորտում իրականացվել են համակարգային, բազմաբնույթ և ինստիտուցիոնալ զարգացմանն ուղղված միջոցառումներ՝ միտված մշակութային ենթակառուցվածքների ամրապնդմանը, մշակութային կրթության որակի բարձրացմանը, հանրային մշակութային կյանքի ակտիվացմանը, մշակութային մասնակցության ընդլայնմանը և քաղաքային մշակութային միջավայրի շարունակական զարգացմանը:

Մշակույթի ոլորտի քաղաքականությունն ուղղված է եղել ոչ միայն միջոցառումների կազմակերպմանը, այլ նաև կայուն համակարգերի ձևավորմանը, կրթական, մշակութային, հանրային և միջազգային համագործակցության ինտեգրմանը, ինչպես նաև մշակույթի դերի ամրապնդմանը որպես քաղաքային զարգացման ռազմավարական ուղղություն:

Երևանի երաժշտական և արվեստի դպրոցներում շարունակվել է երեխաների մշակութային նախնական մասնագիտական կրթության, արտադպրոցական գեղագիտական դաստիարակության, երաժշտարվեստի և արվեստների ուսուցման իրականացումը՝ ուսումնական տարվա ավարտին ամփոփվելով հաշվետու համերգներով:

Ազգային նվագարանների և հայ երաժշտական ավանդույթների պահպանման, տարածման և հանրահռչակման նպատակով շարունակվել է ազգային, լարային և փողային նվագարանների գծով ուսման վարձավճարների փոխհատուցման ծրագիրը, որի շրջանակում ընդգրկվել է 277 շահառու:

Դպրոցների սաները մասնակցել են հանրապետական և միջազգային մրցույթների, փառատոների, վարպետաց դասերի և համերգային ծրագրերի՝ ձեռք բերելով մրցանակներ և դիպլոմներ:

«Քույր դպրոցներ» ծրագրի շրջանակում իրականացվել են փոխայցելություններ, համատեղ համերգային ծրագրեր և վարպետության դասեր՝ ապահովելով միջհամայնքային և միջտարածաշրջանային մշակութային համագործակցության զարգացումը:

Երևանի Սայաթ-Նովայի անվան երաժշտական դպրոցը 2025 թվականին հանդես է եկել որպես ոլորտային զարգացման հարթակ՝ իրականացնելով կրթական, մեթոդաբանական, մշակութային և կառավարման ուղղվածության ծրագրեր: Իրականացվել են՝ համերգային ծրագրեր («Բեմում դասատուներն են»), մասնագիտական սեմինարներ և խորհրդակցություններ (մոտ 200 մանկավարժների ներգրավմամբ), հանրապետական մրցույթ-փառատոների մասնակցություն,

«Փայտփորիկ» սոլֆեջոյի առաջին հանրապետական օլիմպիադա (մասնակցել են 65 դպրոցների 211 շրջանավարտներ, մրցանակային տեղերից 7-ը՝ դպրոցի սաներին), մեթոդական նյութերի հրատարակում և տարածում ՀՀ երաժշտական և արվեստի դպրոցներում, տարեկան գործունեության տարեգրքի հրապարակում: Դպրոցի ընդունելության շրջանակում 2025–2026 ուսումնական տարում ընդունվել է 125 երեխա:

Մեկնարկել են «Սասունցի Դավիթ» բալետ-օրատորիայի երգչախմբային փորձերը՝ Երևանի երաժշտական և արվեստի դպրոցների հավաքական երգչախմբի ձևաչափով: Դպրոցը մասնակցել է նաև «Քույր դպրոցներ» ծրագրի արտերկրյա հյուրախաղերին Ֆրանսիայում՝ Լիոն և Վալանս քաղաքներում՝ ապահովելով միջազգային կրթամշակութային համագործակցության զարգացումը: Տարվա ընթացքում դպրոցի շուրջ 20 սան արժանացել են հանրապետական և միջազգային մրցույթների հաղթողի և դափնեկրի կոչման:

«Ձայնի պահպանման վոկալ-երգչախմբային մասնագիտական դպրոց» ՀՈԱԿ-ի մեծ երգչախումբը մասնակցել է բարձրարվեստ նախագծերի՝ Ալ. Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի ազգային ակադեմիական թատրոնում և այլ մշակութային հարթակներում, ներգրավվելով միջազգային և ազգային նշանակության համերգային և օպերային ծրագրերում: Մասնակցությունը նպաստել է բարձր պրոֆեսիոնալ միջավայրում կրթության ինտեգրմանը և ստեղծագործական կարողությունների զարգացմանը:

Մշակույթի տներում և մանկապատանեկան ստեղծագործության կենտրոններում իրականացվել են բազմաբնույթ կրթամշակութային ծրագրեր՝ ուղղված երեխաների և պատանիների ստեղծագործական ունակությունների, գեղագիտական մտածողության, սոցիալական և քաղաքացիական կարողությունների զարգացմանը: Ծրագրերը ներառել են ուսուցողական դասընթացներ, համերգներ, փառատոներ, բաց դասեր և ինտերակտիվ մշակութային միջոցառումներ:

«Հայաստանի փոքրիկ երգիչներ» մանկական ֆիլիհարմոնիա» ՀՈԱԿ-ը և «Յու. Բախշյանի անվան մանկական ֆիլիհարմոնիա» ՀՈԱԿ-ը իրականացրել են համերգային, կրթական և միջազգային համագործակցային ծրագրեր՝ ներառյալ միջազգային մրցույթներ, փառատոներ, համերգներ և արտերկրյա մասնակցություններ:

«Ա. Իսահակյանի անվան կենտրոնական գրադարան» ՀՈԱԿ-ում իրականացվել է բնակչության գրադարանային-տեղեկատվական սպասարկման շարունակական զարգացում, ֆոնդերի թվայնացում, գրացուցակների համակարգում, մասնագիտական գրականության համալրում, ընթերցողական մշակույթի խթանում և հանրային կրթամշակութային միջոցառումների կազմակերպում:

Գործարկվել են ժամանակակից գրադարանային կառավարման համակարգեր (Koha, ELGRAD), իրականացվել է աշխատակազմի շարունակական մասնագիտական վերապատրաստում, ապահովվել է գրադարանային ծառայությունների ինստիտուցիոնալ զարգացումը:

Երևանի քաղաքապետարանի ենթակայության թանգարաններում իրականացվել են տասնյակ ցուցահանդեսներ, կրթական ծրագրեր, դասախոսություններ, գիտաժողովներ և հանրային միջոցառումներ, իրականացվել են ֆոնդերի համալրման և թվայնացման աշխատանքներ: Թանգարանային գործունեությունը ձևավորվել է որպես կրթություն–մշակույթ–հանրային արժեք

ինտեգրված համակարգ՝ ընդգրկելով տասնյակ հազարավոր այցելուների:

2025 թվականի ընթացքում Երևանի քաղաքապետարանի ենթակայության թատրոններում իրականացվել է ավելի քան 15 բեմադրություն և մոտ 350–400 ներկայացում՝ ներառելով դասական և ժամանակակից դրամատուրգիայի լավագույն ստեղծագործությունները, ինչպես նաև մանկական և երիտասարդական հանդիսատեսին ուղղված ներկայացումները:

Տարվա ընթացքում իրականացվել են նոր բեմադրություններ և պրեմիերաներ, այդ թվում՝ «Ֆիգարոյի ամուսնությունը», «Գանգաթեր Մաքը», «Քին», «Փոքրիկ իշխանը», «Եթե դու մեռնեիր», «Օդ», «Մեղրի համը», «Կատվի տունը»: Թատրոնները մասնակցել են միջազգային և հանրապետական փառատոների, ներգրավվել են միջազգային մշակութային հարթակներում իրականացվող ծրագրերում: Թատրոնները հյուրախաղերով հանդես են եկել ՀՀ մարզերում՝ ապահովելով մշակութային ծառայությունների տարածքային հասանելիությունը և հանդիսատեսի լայն ընդգրկումը: Հատուկ ուշադրություն է դարձվել մանկական և երիտասարդական հանդիսատեսի համար բովանդակության զարգացմանը՝ թատրոնը ինտեգրելով որպես մշակութային կրթության գործիք համայնքային զարգացման համատեքստում:

3.5 Սպորտի և երիտասարդության հարցեր

2025 թվականի երրորդ եռամսյակը նշանավորվեց երկար սպասված՝ Ալբերտ Ազարյանի անվան օլիմպիական նոր մարզադպրոցի կառուցման շինարարական աշխատանքների մեկնարկով և հանդիսավոր հիմնարկեքի արարողությամբ: Մեծ թափով մեկնարկած շինարարական աշխատանքների արդյունքում կարճ ժամանակահատվածում հնարավոր եղավ մեկնարկել բոլոր 6 մասնաշենքերի ընդհանուր բետոնային աշխատանքները: Մարզադպրոցի շինարարական աշխատանքների ամբողջական ավարտը նախատեսվում է 2026 թվականին՝ ձևավորելով ժամանակակից մարզական ենթակառուցվածք և մարզական կրթության զարգացման նոր հարթակ:

Նպաստելով միջգերատեսչական և միջոլորտային համագործակցության զարգացմանը սպորտի միջոցով՝ «Արենա բոուլինգ» ակումբում կազմակերպվել է լրատվամիջոցների բոուլինգի թիմային մրցաշար, որին մասնակցել են լրատվամիջոցների և նախարարությունների լրատվական ծառայությունների 32 թիմեր:

ՀՀ մարզերի և Երևան քաղաքի հանրակրթական դպրոցների 7–12-րդ դասարանների աշակերտների միջև մարտ ամսից մինչև տարեվերջ իրականացվել է «Սպարտակիադա» մարզական միջոցառումների շարքը՝ 8 մարզաձևերից, նպաստելով դպրոցականների ֆիզիկական ակտիվության խթանմանը և մրցակցային սպորտային միջավայրի ձևավորմանը:

Կարևորելով սպորտի դերը նաև նախադպրոցական կրթության ոլորտում, Երևանի սեղանի թենիսի ֆեդերացիայի հետ համատեղ ձեռնարկվել է «Փոքրիկ չեմպիոններ» ծրագիրը, որի շրջանակում սեղանի թենիս մարզաձևը ներդրվել է Երևանի վարչական շրջանների նախադպրոցական ուսումնական հաստատություններում: Ծրագրի մեկնարկը տրվել է մարտ ամսին՝ Երևանի Դավթաշեն վարչական շրջանի թիվ 60 մանկապարտեզում, որը համալրվել է ծրագրի իրականացման համար անհրաժեշտ գույքով:

ՀՀ պետական խորհրդանշանների և ՀՀ Սահմանադրության օրվան նվիրված կազմակերպվել է Yerevan Night Run վազքի մրցաշարը, իրականացվել է Երեխաների պաշտպանության միջազգային օրվան նվիրված մարզամշակութային միջոցառում, կազմակերպվել է «Սպորտլանդիա» մարզական միջոցառումը՝ ՀՀ մարզերի և Երևան քաղաքի հանրակրթական դպրոցների 1-3-րդ և 4-6-րդ դասարանների աշակերտների մասնակցությամբ:

Տարվա ընթացքում կազմակերպվել են նաև Երևանյան վազքի մրցաշարը, Երևանցի տարեցների մրցույթը, ինչպես նաև մի շարք միջազգային և քաղաքային առաջնություններ ու հուշամրցաշարեր, այդ թվում՝ Լյովա Վարդանյանի անվան ազատ ոճի ըմբշամարտի միջազգային հուշամրցաշար, Ռաֆայել Վահանյանի անվան շախմատի միջազգային մրցաշար, Բենուր Փաշայանին նվիրված հունահռոմեական ոճի ըմբշամարտի միջազգային հուշամրցաշար, Մարմնամարզության Երևանի բաց առաջնություն, Հեծանվասպորտի Երևանի բաց առաջնություն (Երևանի քաղաքապետի գավաթ)՝ 4 մարզաձևերից, Հաշմանդամություն ունեցող անձանց միջազգային փառատոն, «Բարեկամության գավաթ» բոնցքամարտի միջազգային մրցաշար, «Օլիմպիական հույսեր» թեթև աթլետիկայի միջազգային մրցաշար, Սուներամարտի, շաշկու և հանդբոլի Երևանի առաջնություններ, որոնց մասնակցել են ընդհանուր առմամբ 253 մարզիկ-մարզուհիներ, «Ջրագնդակի բաց առաջնություն»՝ նվիրված Հենրիկ Հակոբյանի հիշատակին, Աթլետիկայի հուշամրցաշար՝ նվիրված ՀՀ վաստակավոր մարզիչ Զաուրի Սարգսյանին, Գեղարվեստական մարմնամարզության և ակրոբատիկ մարմնամարզության Երևանի առաջնություններ:

Ջերմուկ քաղաքում անցկացվել են Համահայկական ձմեռային 2-րդ խաղերը, որոնց մասնակցել են աշխարհի 18 երկրներից ժամանած ավելի քան 1340 պատվիրակներ:

Կազմակերպվել են նաև երիտասարդության միջազգային օրվան նվիրված տոնական համերգ և ցուցահանդես, ինչպես նաև 2025 թվականի Երևանի լավագույն մարզիկների պարգևատրման հանդիսավոր արարողությունը:

Ֆեդերացիաների աջակցության և համագործակցային ծրագրերի շրջանակներում ֆինանսական աջակցություն է տրամադրվել Հայաստանի վոլեյբոլի ֆեդերացիային, Հայաստանի ըմբշամարտի ֆեդերացիային, Հայաստանի բադմինթոնի ֆեդերացիային, ինչպես նաև ՀՀ հաշմանդամային սպորտի ֆեդերացիա ՀԿ-ին՝ թիմերի գործուղումների ապահովման նպատակով: Ֆինանսական միջոցներ են հատկացվել նաև «Ֆակտորի Փրոդակշն» ՍՊԸ-ին՝ Ազատության հրապարակում մասշտաբային մարզական միջոցառումների կազմակերպման համար, «Ազատագեն» կրթական ՀԿ-ին՝ հրաձիգների համահայկական մրցույթի կազմակերպման նպատակով, Հայաստանի ըմբշամարտի ֆեդերացիա ՀԿ-ին՝ բաց առաջնության անցկացման համար, Հայաստանի շախմատի ակադեմիա հիմնադրամին՝ Մոնտենեգրոյի Բուդվա քաղաքում կայանալիք Եվրոպայի պատանիների շախմատի առաջնությանը մասնակցության ապահովման նպատակով, ինչպես նաև Հայաստանի բադմինթոնի ֆեդերացիա ՀԿ-ին՝ միջազգային մրցաշարի անցկացման համար:

Համայնքի ենթակայության մարզադպրոցները և ՀՈԱԿ-ները ապահովվել են անհրաժեշտ մարզագույքով՝ նպաստելով մարզական գործընթացների որակական կազմակերպմանը և մարզական ենթակառուցվածքների կայուն զարգացմանը:

4.ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐ ԵՎ ԿԼԻՄԱՅԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Քաղաքի կայուն զարգացման բնապահպանական օրակարգի շրջանակում իրականացվել են կանաչ տարածքների ընդլայնմանն ուղղված բազմաթիվ ուղղված ծրագրեր:

Մաքուր և առողջ Երևան ունենալու համար մթնոլորտային օդի որակի մոնիթորինգ է իրականացվում Երևանի քաղաքապետարանի կողմից շինհրապարակներում տեղադրված օդի որակի մոնիթորինգի սարքերի, Շրջակա միջավայրի նախարարության «Հիդրոօդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ-ի 5 անշարժ դիտակայանների (Արաբկիր, Նոր Նորք, Կենտրոն, Շենգավիթ վարչական շրջաններ), ինչպես նաև 45 շարժական դիտակետերի միջոցով: Երևան քաղաքում, շինհրապարակներում տեղադրված 186 օդի որակի չափիչ սարքերից ստացվող տեղեկատվությունն առցանց հասանելի է Երևանի քաղաքապետարանի պաշտոնական՝ www.yerevan.am կայքում, որտեղ բացի տվյալ պահին պղի որակի ցուցանիշներից, ներկայացված է նաև պատմական տվյալներ նախորդ տարիների նույն ժամանակահատվածի օդի որակի մասին և կանխատեսումային տվյալներ հաջորդող օրերի վերաբերյալ: կայքում ներկայացված է նաև վերլուծական բնույթի տեղեկատվություն օդի որակի վրա ազդող գործոնների վերաբերյալ:

Օդի որակի բարելավման նպատակով իրականացված աշխատանքների շրջանակն ընդգրկում է շինհրապարակներում վարչարարության խստացումը, Երևան քաղաքի ավագանու 2012 թվականի մարտի 16-ի N 405-Ն որոշմամբ նոր պահանջների (փոշու համար անթափանց ցանցով ցանցապատում, օդի որակի սարքերի տեղադրում, ջրցան թնդանոթների տեղադրում, շինհրապարակի հողագրուտնի անհրաժեշտ խոնավության ապահովում, շինարարական սորուն նյութերի, հողային զանգվածների պահեստավորում և տեղափոխում փակ տարաներով կամ փակ փաթեթավորմամբ) սահմանումը, հանրային տրանսպորտի շարժակազմի շարունակական փոփոխությունը (դիզելով, բենզինով աշխատող շարժակազմի փոխարեն էլեկտրականությամբ, գազով աշխատող շարժակազմի ձեռքբերում), հանքավայրերում ընդերքօգտագործողների համար Երևան քաղաքի ավագանու 2009 թվականի դեկտեմբերի 2-ի N 48-Ն որոշմամբ շրջակա միջավայրի պահպանության նոր պահանջների սահմանում և այլն:

Կլիմայական փոփոխությունների ազդեցության դիմակայունությունը բարձրացնելու նպատակով իրականացվել են հարմարվողականության ծրագրեր, միջոցառումներ են ձեռնարկվել ջրահեռացման համակարգերի բարելավմանն ու ենթակառուցվածքների արդիականացման ուղղությամբ: Կազմվել է Երևան քաղաքում անձրևաջրերի հավաքման, ֆիլտրման և ոռոգման նպատակով օգտագործման բնապահպանական ծրագիրը, որը հաստատվել է Երևան քաղաքի ավագանու 2025 թվականի սեպտեմբերի 9-ի N 394-Ա որոշմամբ, որը կիրականացվի 2026 թվականին:

Ընդհանուր էկոլոգիական վիճակի բարելավման նպատակով իրականացվել են աշխատանքներ՝ մայրաքաղաքում և մայրաքաղաքը գոտիավորող հարակից տարածքներում կանաչ տնկարկներով պաշտպանիչ շերտ ստեղծելու ուղղությամբ:

Անտառպաշտպանիչ բուֆերային գոտու ստեղծման շրջանակում մեկնարկել են և սահմանված

գրաֆիկով ընթանում են Նուբարաշենի խճուղու հարևանությամբ անտառպաշտպանիչ գոտու ստեղծման աշխատանքները: Անցկացվել է 2300 մ ջրագիծ ոռոգման ջրով ապահովելու համար: Կառուցվում են 50 խ.մ ծավալով ջրավազան, պոմպակայան, ոռոգման կաթիլային համակարգ: Ծառատունկը նախատեսվում է իրականացնել 2026 թվականի գարնանը: Տնկվելու է 10650 ծառ:

Շարունակվում են աշխատանքները «Դալմայի այգիներ» նորահայտ հուշարձանի տարածքում համայնքային զբոսայգու հիմնման ուղղությամբ: Մասնավորապես, 2025 թվականի դեկտեմբերին հայտարարվել է Դալմայի այգիների և Կոմիտասի պարկի հայեցակարգի և նախագծերի մշակման միջազգային մրցույթ, ինչը հնարավորություն է ստեղծում ունենալ հիմնային փաստաթղթեր ծրագիրը լավագույն միջազգային կազմակերպությունների ներգրավմամբ իրականացնելու համար:

Հրազդանի կիրճին բնապահպանական կարգավիճակ շնորհելու գործընթացի շրջանակներում Ասիական զարգացման բանկի աջակցությամբ միջազգային կազմակերպության կողմից իրականացվում են կիրճի քաղաքաշինական պլանավորման, կիրճի թվային երկվորյակի ստեղծման և կառավարման բարելավման, Երևանյան լճի նստվածքների գնահատման, պատվարի սեյսմիկ վիճակի գնահատման ուսումնասիրություններ, որոնք կավարտվեն 2026 թվականի մայիսին: Իրականացվել է Հրազդան գետի երկայնքով կոյուղու կոլեկտորի կառուցման իրագործելիության ուսումնասիրություն, մշակվել է այլընտրանքային լուծումների (լոկալ մաքրման կայանների) տեխնիկական պայմանները: Այս տարբերակը հնարավորություն է տալիս աշխատանքները կազմակերպել փուլային եղանակով:

Երևանի ջրային տարածքների էկոլոգիական վիճակի բարելավման նպատակով իրականացվել է Հրազդանի կիրճի կանաչ տարածքներում և ջրային տարածքներում կուտակված շուրջ 9000 խմ աղբի հավաքում և տեղափոխում աղբավայր:

2025 թվականի ընթացքում Երևան քաղաքում կանաչապատման և շրջակա միջավայրի բարելավման ուղղությամբ իրականացվել են լայնածավալ և համակարգային աշխատանքներ, որոնց արդյունքում արձանագրվել են հետևյալ հիմնական ցուցանիշները. Երևանի կանաչ տարածքների ընդհանուր մակերեսը ավելացել է 14.1 հեկտարով, տնկվել է 5,044 արժեքավոր հասուն ծառատեսակ, 35,186 թուփ, որից 29,675-ը՝ մշտադալար, քաղաքի տարբեր հատվածներում հիմնվել են ծաղկանոցներ, տնկվել է շուրջ 328,405 ծաղիկ, այդ թվում՝ վարդատեսակներ: Կազմակերպության կողմից արտադրվել է ընդհանուր առմամբ 56,495 բուսատեսակ, այդ թվում՝ 535 ծառ, 10,460 թուփ և 45,500 ծաղիկ: Աշտարակ խճուղու մուտքի հատվածում և միջնաշերտում ստեղծվել է նոր ուրբան անտառ՝ շուրջ 4 հեկտար տարածքում, որտեղ տնկվել է 1,272 ծառ: Սուրբ Սարգիս եկեղեցուն և Դավիթ-Բեկ փողոցին հարող շուրջ 6 հեկտար տարածքում հիմնվել է նոր ուրբան անտառ՝ տնկելով մոտ 1,700 ծառ: Դավթաշեն վարչական շրջանում շուրջ 1 հեկտար տարածքի վրա ստեղծվել է նոր այգի, տնկվել է 87 ծառ:

Նորք-Մարաշ վարչական շրջանի Այծեմնիկ Ուրարտու փողոցի վերջնամասում 0.5 հեկտար տարածքում հիմնվել է նոր այգի՝ տնկելով 38 ծառ և 500 թուփ: Փարոսի ագրոանտառում 2.4 հեկտար տարածքի վրա հիմնվել է նոր ագրոանտառ, որտեղ տնկվել է շուրջ 1,000 պտղատու

ծառ: Դավթաշեն և Սիլիկյան գերեզմանատներին հարող փողոցներում ստեղծվել են նոր կանաչ տարածքներ՝ 0.2 հեկտար մակերեսով, տնկվել է 235 ծառ: Երևանի բոլոր վարչական շրջաններում շարունակվել են ծաղկանոցների հիմնման աշխատանքները՝ ապահովելով քաղաքային միջավայրի գեղագիտական բարելավում: Ծառերի էտման աշխատանքներ իրականացվել են 126 փողոցներում, 817 բակերում, 34 այգիներում, 123 դպրոցներում, ինչպես նաև գնդաձև ակացիաների տարածքներում: Ընդհանուր առմամբ էտվել է շուրջ 19,952 ծառ:

Քաղաքում իրականացվել են դենդրոպաթյուզիական դիտարկումներ, որոնց հիման վրա իրականացվել են բույսերի պաշտպանության համատարած վերգետնյա և ստորգետնյա քիմիական պայքարի միջոցառումներ: Կառուցվել են նոր ջրագծեր՝ 27,542 գծամետր, արդիականացվել՝ 5,595 գծամետր, վերանորոգվել՝ 1,736 գծամետր, ընդհանուր առմամբ՝ շուրջ 34,873 գծամետր:

Ավարտվել են Քանաքեռ-Զեյթուն և Ավան վարչական շրջանների քարտեզագրման և ծառերի գույքագրման աշխատանքները, ինչպես նաև իրականացվել են լրացումներ նախկինում գույքագրված տարածքներում: Ընդհանուր առմամբ գույքագրվել է շուրջ 150,000 ծառաթփատեսակ:

Թափոնամանների տեղադրման հասցեների թիվը հասցվել է 267-ի: Հավաքագրվել և վերամշակման է հանձնվել շուրջ 958,765 կգ թափոն, այդ թվում՝ 696,085 կգ սովաբաթուղթ, 194,690 կգ ապակի, 66,215 կգ պլաստիկ և 1,775 կգ այլումին:

Երևանի բոլոր 40 շատրվաններն ու արհեստական ջրավազանները շահագործվել են մայիսի 1-ից մինչև նոյեմբերի 1-ը՝ ապահովելով տեխնիկական սպասարկում, սանիտարական մաքրում և նորմավորված քլորացում: Շահագործվել և սպասարկվել է նաև Երևանյան լիճը, իսկ ձմեռային ժամանակահատվածում գործարկվել է Կարապի լճի սահադաշտը:

Արդյունքում, 2022–2025 թվականների ընթացքում Երևան քաղաքում կանաչ տարածքների ավելացումը կազմել է շուրջ 60 հեկտար, որը գումարվելով 2020–2021 թվականներին արձանագրված 850 հեկտարին, ապահովել է շուրջ 910 հեկտար կանաչ տարածք՝ համադրելի Խորհրդային միության վերջին տարիներին առկա ցուցանիշների հետ:

Երևանի կենդանաբանական այգու ընդլայնման գործընթացների շրջանակներում մեկնարկել են Երևանի կենդանաբանական այգում պահեստային շինությունների կառուցման աշխատանքները, որոնք կավարտվեն 2026 թվականին: Դա հնարավորություն կտա այգու ներկայիս պահեստային շինությունների տարածքում իրականացնել նոր, միջազգային չափանիշներին համապատասխան փղերի ազատավանդակի կառուցումը:

Կազմվել է Երևան քաղաքում խառը կենցաղային թափոնների վերամշակման գործարանի կառուցման և շահագործման ներդրողի ընտրության բաց հրապարակային երկփուլ մրցույթ հայտարարելու, մրցույթի գնահատող հանձնաժողով ձևավորելու, հանձնաժողովի անհատական կազմը և կանոնակարգը հաստատելու մասին Երևանի քաղաքապետի որոշման նախագիծը, մրցույթի տեխնիկական պահանջները և այլն, որը հաստատվել էր Երևանի քաղաքապետի 23.12.2025թ. հ. 5249-Ա որոշմամբ: Մրցույթին դիմելու վերջնաժամկետն է 2026 թվականի մարտի 27-ը:

Երևանի կոշտ թափոնների կառավարման ծրագիրը հանդիսանում է քաղաքի էկոլոգիական անվտանգության և կայուն զարգացման կարևորագույն ռազմավարական նախաձեռնություններից մեկը՝ ուղղված շրջակա միջավայրի պահպանմանը, հանրային առողջության պաշտպանությանը և թափոնների կառավարման համակարգի համապատասխանեցմանը եվրոպական չափանիշներին: Ծրագիրը նպատակ ունի ապահովել գործող աղբավայրերի փուլային փակումը և ժամանակակից սանիտարական աղբավայրի կառուցումը՝ ներդնելով թափոնների կառավարման արդյունավետ և կայուն լուծումներ:

2025 թվականին ծրագրի շրջանակում իրականացվել են բազմակողմ բանակցություններ Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի և զարգացման այլ գործընկերների հետ՝ ծրագրի ֆինանսավորման հնարավորությունների շուրջ, ինչպես նաև աշխատանքային քննարկումներ ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության և ՀՀ ֆինանսների նախարարության հետ՝ ծրագրի իրականացման գործընթացի համակարգման նպատակով: Արդյունքում ՀՀ ֆինանսների նախարարության կողմից ՎՋԵԲ-ին ներկայացվել է պաշտոնական դիմում՝ Երևանի կոշտ թափոնների կառավարման ծրագրի մեկնարկի և ֆինանսավորման ապահովման նպատակով:

Տարեվերջին հայտարարվեց նաև շրջակա միջավայրի և սոցիալական ազդեցության գնահատման խորհրդատվական ծառայությունների մրցույթը, ինչպես նաև միջազգային խորհրդատվական ընկերության ներգրավման մրցույթ՝ ներդրումային ծրագրի իրագործելիության ուսումնասիրության և մրցութային փաթեթների պատրաստման համար:

5. ԽԵՆԱՑԻ ՔԱՂԱՔ ԵՎ ԹՎԱՅԻՆ ՓՈԽԱԿԵՐՊՈՒՄ

Հաշվետու տարվա ընթացքում իրականացված միջոցառումները կենտրոնացել են քաղաքային կառավարման համակարգերի կառուցվածքային թվայնացման, քաղաքային ծառայությունների միասնականացման, տվյալների կառավարման ինստիտուցիոնալ միջավայրի ձևավորման և թվային ենթակառուցվածքների համալիր զարգացման վրա:

Իրականացվել են Երևանի էլեկտրոնային ծառայությունների միասնական հարթակի՝ **YES platform**-ի ստեղծման և զարգացման ուղղությամբ համակարգային աշխատանքներ:

Հարթակի շրջանակում ձևավորվել են քաղաքացու թվային սպասարկման հիմնական ինստիտուցիոնալ բաղադրիչները, մասնավորապես՝

- քաղաքացու միասնական օգտահաշվի համակարգ,
- օգտատիրոջ էլեկտրոնային գրասենյակ,
- կատարված գործարքների պատմության ձևավորման համակարգ,
- միասնական ֆինանսական հաշվի համակարգ,
- քաղաքացու պարտավորությունների հաշվառման և ինքնաշխատ մարման մեխանիզմ,
- բջջային հավելվածի ստեղծման ինստիտուցիոնալ և տեխնիկական հիմքեր:

Այս համակարգերի համակցված ներդրմամբ ձևավորվում է քաղաքային ծառայությունների մատուցման միասնական թվային միջավայր, որը թույլ է տալիս քաղաքացուն փոխգործակցել քաղաքապետարանի ծառայությունների հետ մեկ միասնական հարթակի միջոցով՝ ապահովելով

ծառայությունների հասանելիություն, պարզություն, թափանցիկություն և հաշվետվողականություն:

2025 թվականի ընթացքում շարունակվել են **Twin City** հայեցակարգի շրջանակում քաղաքի թվային կրկնօրինակի ձևավորման աշխատանքները՝ որպես քաղաքային կառավարման և պլանավորման համակարգերի հիմքային թվային բաղադրիչ:

Մասնավորապես, շարունակական զարգացում է ունեցել **gis.yerevan.am** հարթակը՝ որպես քաղաքային տարածական տվյալների կենտրոնացված միջավայր, որտեղ իրականացվել են տվյալների ինտեգրման, վերլուծության և կառավարման գործառնությունների զարգացում հետևյալ ոլորտներում՝

Քաղաքաշինություն

- 4-րդ դիսկայնության կառուցվող օբյեկտների 3D մոդելների ներմուծում,
- գործիքակազմի բարելավում,
- Երևանի գլխավոր հատակագծի ներմուծում GIS հարթակ:

Անշարժ գույք

- համայնքային գույքերի տեղեկատվական-վերլուծական հարթակի ստեղծում:

Շինբարեկարգում

- նոր վերելակների տեղադրման թվային հարթակի ստեղծում,
- ասֆալտապատման աշխատանքների վերահսկման հարթակի ստեղծում,
- բակերի, այգիների, ֆուտբոլի դաշտերի կառուցման և բարեկարգման թվային կառավարման հարթակ,
- մանկապարտեզների կառուցման և վերանորոգման թվային հարթակի ձևավորում,
- AI գործիքակազմով ասֆալտի վնասվածքների հայտնաբերում,
- ասֆալտի վնասվածքների քարտեզավորման հարթակի ստեղծում:

Կոմունալ տնտեսություն

- կենսաապահովման ենթակառուցվածքների շինարարական թույլտվությունների վերահսկման հարթակ,
- աղբամանների քարտեզավորման համար դաշտային աշխատողների mobile mapping գործիքակազմ,
- աղբամանների քարտեզավորման աշխատանքների վերահսկման հարթակ,
- աղբատարների GPS սարքերի ինտեգրում պիլոտային GEOEVENT համակարգի հետ,
- աղբահանության իրականացման վերահսկման և վերլուծության հարթակ:

Կանաչապարում

- խոշորածավալ կանաչապատման տվյալների («կանաչ տարածքներ») տեղեկատվական հարթակ,
- օդի աղտոտվածության մոնիթորինգի հարթակի բարելավում:

Տրանսպորտ

- կանգառների քարտեզավորման համար դաշտային աշխատողների mobile mapping գործիքակազմ,

- կանգառների քարտեզավորման աշխատանքների վերահսկման հարթակ:

Առևտուր և ծառայություններ

- առևտրային օբյեկտների քարտեզավորման համար դաշտային աշխատողների mobile mapping գործիքակազմ,
- առևտրային օբյեկտների քարտեզավորման աշխատանքների վերահսկման և վերլուծական հարթակ:

Հանրակրթություն

- մանկապարտեզների տեղեկատվական հարթակի ստեղծում՝ «Մանկապարտեզ» համակարգի հետ ինտեգրման և առցանց տվյալների ստացման միջոցով:

2025 թվականին «Խելացի քաղաք և թվային փոխակերպում» ուղղությամբ իրականացված միջոցառումների արդյունքում ձևավորվել է քաղաքային թվային կառավարման բազմաշերտ համակարգ: Այս համակարգը հանդիսանում է Երևանի՝ որպես խելացի, թվայնացված, արդյունավետ կառավարվող և ինստիտուցիոնալ զարգացող քաղաքի ձևավորման հիմնարար ենթակառուցվածք:

Երևան քաղաքի ավագանու 2025թ. դեկտեմբերի 23 N° 480-Ն որոշմամբ փոփոխություն է կատարվել Երևան քաղաքի ավագանու 2024թ. դեկտեմբերի 24 N°249 որոշման մեջ, ինչի արդյունքում 2026թ. հունվարից ավտոմատ ինքնասպասարկող սարքերի միջոցով առևտուր իրականացնելու կամ ծառայություններ մատուցելու թույլտվությունները տրամադրվում է նոր ձևաչափին համապատասխան:

6.ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ԶԱՐԳԱՑՈՒՄ

Երևանի տեղական ինքնակառավարման մասին ՀՀ օրենսդրության փոփոխությունների և լրացումների ապահովման նպատակով մշակված նախագիծը ՀՀ կառավարության որոշմամբ հավանության արժանանալու դեպքում նախատեսվում է ուղարկել ՀՀ Ազգային ժողով՝ օրենսդրական ընթացակարգերի շրջանակում քննարկման և ընդունման գործընթացի ապահովման նպատակով:

Ծրագրային բյուջետավորման համակարգի ներդրման ուղղությամբ իրականացվել են համակարգային և մեթոդաբանական աշխատանքներ: Մասնավորապես՝ մշակվել են ծրագրային բյուջետավորման ներդրման համար անհրաժեշտ մեթոդաբանական ուղեցույցերը, ծրագրերի կառուցվածքային մոդելները, բյուջետային հայտերի ձևաչափերը, ինչպես նաև գործիքակազմը՝ համակարգի գործնական կիրառելիության ապահովման նպատակով:

Ծրագրային բյուջետավորումը ինստիտուցիոնալ կերպով ներդրվել է Երևան քաղաքի 2026 թվականի բյուջեում, որը հանդիսանում է քաղաքային զարգացման ծրագրերի տարեկան ֆինանսավորման հիմնական ուղղորդիչ փաստաթուղթը:

Մասնավորապես, Երևան քաղաքի 2026 թվականի բյուջեի ուղերձին կից փաստաթղթի տեսքով

ներկայացված է բյուջեն՝ ծրագրային բյուջետավորման ձևաչափի և չափանիշների հիման վրա, որն ապահովում է ֆինանսական ռեսուրսների ուղղորդման նպատակների, ծրագրային առաջնահերթությունների, ակնկալվող արդյունքների և ազդեցության վերաբերյալ համապարփակ, թափանցիկ և արդյունքահեն տեղեկատվության ներկայացում:

Նշված գործընթացները ձևավորում են քաղաքային կառավարման և ֆինանսական պլանավորման նոր ինստիտուցիոնալ մոդելի հիմքը, ուղղված՝ ռազմավարական նպատակահեն պլանավորման ամրապնդմանը, ֆինանսական ռեսուրսների արդյունավետ բաշխմանը, ծրագրերի արդյունքահեն կառավարմանը, հաշվետվողականության և թափանցիկության բարձրացմանը, ինչպես նաև քաղաքային զարգացման քաղաքականության համակարգայնացմանը:

«Մոդել Երևան» պիլոտային ծրագիրը հանդիսանում է Երևանի քաղաքապետարանի ինստիտուցիոնալ զարգացման կարևոր բաղադրիչ՝ ուղղված քաղաքային կառավարման համակարգի կարողությունների ամրապնդմանը, քաղաքականությունների մշակման և իրականացման գործընթացների արդիականացմանը, ինչպես նաև նորարարական և մասնակցային կառավարման մշակույթի ձևավորմանը:

Ծրագրի շրջանակում նախատեսվում է ձևավորել փորձարարական և ուսումնական հարթակ, որի միջոցով երիտասարդները հնարավորություն կունենան մշակելու, փորձարկելու և գնահատելու քաղաքային զարգացման նոր մոտեցումներ՝ հիմնված տվյալների, վերլուծության և միջազգային լավագույն փորձի վրա: Սա կնպաստի քաղաքական որոշումների որակի բարձրացմանը, միջգերատեսչական համագործակցության ամրապնդմանը և կազմակերպական ճկունության զարգացմանը:

2025 թվականին իրականացվել են ծրագրի հայեցակարգի մշակման և հաստատման աշխատանքները, մշակվել է նաև պիլոտային ակադեմիայի կազմակերպման մեթոդաբանությունը:

Արդեն 2026 թվականին երկրորդ եռամսյակում կմեկնարկի վեցամսյա պիլոտային նախաձեռնությունը, որի ընթացքում կիրականացվեն նպատակային ուսումնական, գործնական և փորձարարական դասընթացներ, սիմուլյացիոն դերախաղեր՝ ապահովելով ծրագրի արդյունքների ինստիտուցիոնալացում և դրանց ինտեգրում քաղաքապետարանի երկարաժամկետ կառավարման գործընթացներում:

7. ՄՈՆԻՏՈՐԻՆԳ, ԳՆԱՀԱՏՈՒՄ ԵՎ ՀԱՇՎԵՏՎՈՂԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Ձևավորվել են Երևանի զարգացման և ներդրումային ծրագրերի պլանավորման, մոնիտորինգի, գնահատման և հաշվետվողականության համակարգի ինստիտուցիոնալ հիմքերը:

Մասնավորապես, մշակվել են զարգացման և ներդրումային ծրագրերի պլանավորման, մոնիտորինգի և հաշվետվողականության վերաբերյալ հայեցակարգային փաստաթղթեր և

մեթոդաբանական մոտեցումներ, որոնք սահմանում են ծրագրերի ամբողջական կյանքի ցիկլի կառավարման շրջանակը՝ սկսած պլանավորումից և իրականացումից մինչև գնահատում և հաշվետվողականություն:

Ձևավորված ինստիտուցիոնալ հիմքերը նպատակ ունեն ապահովելու ծրագրերի կառավարման համակարգային մոտեցումներ, մոնիտորինգի և գնահատման միասնական մեթոդաբանության կիրառում, արդյունքների չափելիություն և վերահսկելիություն, հաշվետվողականության ինստիտուցիոնալ մեխանիզմների ամրապնդում և տվյալահեն որոշումների կայացման գործընթացների ապահովում:

Նշված հայեցակարգային և ինստիտուցիոնալ լուծումները նախատեսվում է փուլային ներդնել և կիրառել 2026 թվականից, ապահովելով քաղաքային զարգացման ծրագրերի կառավարման համակարգի ամբողջական անցումը կառուցվածքային, համակարգված և ինստիտուցիոնալ մոդելի:

Երևանի քաղաքապետարանը, Բաց կառավարման գործընկերություն (ԲԿԳ) նախաձեռնության շրջանակում ստանձնած հանձնառությունների ներքո, իրականացնում է քաղաքային կառավարման թափանցիկության, հաշվետվողականության և քաղաքացիական մասնակցության բարձրացմանն ուղղված բարեփոխումներ: Այդ համատեքստում Երևանի 2025 թվականի զարգացման ծրագիրը հանդիսանում է Երևան քաղաքի առանցքային փաստաթուղթը, որի նպատակն է ամրագրել առաջնահերթությունները և ներկայացնել իրականացված ու նախատեսվող գործողությունները:

Կարևորելով բնակիչների իրազեկվածությունը, վերաբերմունքը և ակնկալիքները Երևանի 2025 թվականի զարգացման ծրագրի նկատմամբ՝ Երևանի քաղաքապետարանը պատվիրել է անկախ հետազոտական գնահատում՝ բացահայտելու այն ոլորտները, որտեղ քաղաքացիները տեսնում են առաջընթաց կամ, հակառակը, փոփոխությունների պակաս: Ստացված արդյունքներն օգտագործվելու են հաջորդ ծրագրային ցիկլի առաջնահերթությունների ձևավորման գործընթացում:

Հետազոտությունն իրականացվել է **խառը մեթոդների մոտեցմամբ**՝ համադրելով քանակական և որակական տվյալները:

- **Քանակական փուլ.** իրականացվել է 300 դեմ առ դեմ հարցազրույց (CAPI) Երևան քաղաքի չափահաս բնակչության շրջանում՝ կիրառելով ստրատիֆիկացված քվոտային ընտրանքի մեթոդաբանությունն ըստ վարչական շրջանների, սեռի և տարիքի:
- **Որակական փուլ.** իրականացվել է 3 ֆոկուս խմբային քննարկում հետևյալ խմբերի հետ՝ 25 – 45 տարիքային խումբ, 46+ տարիքային խումբ, խոցելի խմբեր:

Այս համադրությունը հնարավորություն է տվել ոչ միայն չափել ցուցանիշները, այլ նաև հասկանալ քաղաքացիների ընկալումների, դժգոհությունների և ակնկալիքների խորքային պատճառները:

Դաշտային աշխատանքներն իրականացվել են 2025 թվականի նոյեմբերի 17-ից դեկտեմբերի 7-ն ընկած ժամանակահատվածում: Որպես քաղաք թոփ 3 հրատապ խնդիրներ՝ հարցվածներն առանձնացրել են օդի աղտոտվածության կառավարում (58%), խցանումների կառավարումը (47%) և հասարակական տրանսպորտի վիճակը (26%) երեք հրատապ խնդիրներն են, որոնց վրա, ըստ հարցվողների, քաղաքապետարանը պետք է կենտրոնանա 2026 թվականին:

Թվերի գումարը 100% չի կազմում, քանի որ բազմալի տարբերակներով հարց է ընտրվում 300	Ընդհանուր	Արական	Իգական
Օդի աղտոտվածության կառավարում	58%	49%	66%
Խցանումների կառավարում	47%	56%	40%
Հասարակական տրանսպորտի վիճակ	26%	25%	27%
Ջրամատակարարման և կոյուղու համակարգերի համակարգում	24%	21%	27%
Օտառատունկ և կանաչապատում	21%	24%	19%
Հանր. առողջ. սպասնվման և բաղ. առողջ. ենթակառուց. կառավարում	16%	16%	17%
Աղբահանության կազմակերպում	15%	14%	16%
Բակերի և խաղահրապարակների բարեկարգում	15%	12%	17%
Կայանատեղերի համակարգում	11%	14%	9%
Պատմամշակութային շենքերի և վայրերի պահպանություն	8%	10%	6%
Այգիների և հանգստի գոտիների բարեկարգում	6%	3%	9%
Հետիոտնային ճանապարհների և անցումների բարեկարգում	6%	7%	5%
Ասֆալտապատում	5%	7%	4%
Թեքահարթակների կառուցում/բարեկարգում	5%	0%	9%
Քաղաքաշինություն	5%	5%	5%
Հեծանվային ճանապարհների կառուցում/բարեկարգում	3%	4%	2%

Հարցվածների գնահատմամբ՝ հրատապ լուծում պահանջող ոլորտներից երկուսում (Օդի աղտոտվածություն և խցանումների կառավարում) հարցման մասնակիցները ամենաքիչն են առաջընթաց տեսնում:

Որակական հետազոտության արդյունքները փոքր-ինչ լրացնում են վերը նշվածը: Այսպես՝ հարցվողների գնահատմամբ՝ 2025 թվականին առավել տեսանելի բարելավումներ են արձանագրվել ասֆալտապատման, աղբահանության կազմակերպման, այգիների և բակային տարածքների բարեկարգման, ինչպես նաև կրթական ու առողջապահական հաստատությունների ֆիզիկական պայմանների բարելավման ոլորտներում: Միննույն ժամանակ, քաղաքացիները բավարար առաջընթաց չեն նկատում օդի աղտոտվածության կառավարման, խցանումների նվազեցման, հանրային տրանսպորտի գերծանրաբեռնվածության հաղթահարման, ջրահեռացման և կոյուղու համակարգերի

Ներկայացված է միայն նկատելի եմ որոշ չափով առաջընթաց և/կամ նշանակալի չափով առաջընթաց տարբերակների հանրագումարը Ընտրանքը 300	Ընդհանուր
Ասֆալտապատում	64%
Աղբահանության կազմակերպում	63%
Այգիների և հանգստի գոտիների բարեկարգում	63%
Քաղաքաշինություն	61%
Բակերի և խաղահրապարակների բարեկարգում	58%
Հետիոտնային ճանապարհների և անցումների բարեկարգում	57%
Հասարակական տրանսպորտի վիճակ	46%
Թեքահարթակների կառուցում/բարեկարգում	42%
Օտառատունկ և կանաչապատում	42%
Ջրամատակարարման և կոյուղու համակարգերի համակարգում	35%
Հանրային առողջության սպասնվման և բաղաքային առողջապահական ենթակառուցվածքների կառավարում	31%
Պատմամշակութային շենքերի և վայրերի պահպանություն	31%
Կայանատեղերի համակարգում	19%
Հեծանվային ճանապարհների կառուցում/բարեկարգում	11%
Խցանումների կառավարում	10%
Օդի աղտոտվածության կառավարում	3%

արդյունավետության, ինչպես նաև քաղաքաշինական ու տարածքային համաչափ զարգացման ուղղություններում: Հատկապես ընդգծվում է, որ չբարելավված ոլորտները ունեն համակարգային բնույթ և անմիջական ազդեցություն են ունենում քաղաքացիների առօրյա կյանքի որակի և առողջության վրա: Քաղաքացիների ընկալմամբ՝ այս ոլորտներում անհրաժեշտ են ոչ թե կետային, այլ համալիր և հետևողական միջամտություններ:

Զարգացման 2025 թվականի ծրագիրը երիտասարդների կողմից հիմնականում ընկալվում է որպես ընթերցանելի, սակայն 45+ և խոցելի խմբերում այն գնահատվում է որպես չափազանց ծավալուն, կրկնվող և մասնագիտական լեզվով գրված փաստաթուղթ:

Ծրագրի ընդհանուր ընկալումը տատանվում է չեզոքից մինչև թույլ. այն ներկայիս տեսքով չի ընկալվում որպես ամբողջովին իրատեսական և գործնական փաստաթուղթ: Միևնույն ժամանակ, մասնակիցները ծրագիրը դիտարկում են որպես քննարկման և լրամշակման հիմք՝ պայմանով, որ այն համալրվի հստակ առաջնահերթություններով, իրականացման մեխանիզմներով և մասնակցային մոտեցմամբ:

Հետազոտությունը ցույց է տալիս, որ Երևանի 2025թ. զարգացման ծրագրի վերաբերյալ իրազեկվածությունը ցածր է. քանակական տվյալներով ծրագրի մասին լսել է միայն հարցվածների մոտ 1/5-ը:

Ծրագրի վերաբերյալ տեղեկատվության հիմնական աղբյուրները հեռուստատեսությունն ու սոցիալական ցանցերն են, մինչդեռ քաղաքապետարանի պաշտոնական կայքն ու ավագանու նիստերը ունեն սահմանափակ դեր, ինչը վկայում է ծրագրի ոչ համակարգված հանրային ներկայացման մասին:

Ֆոկուս խմբերի արդյունքները ցույց են տալիս, որ նույնիսկ ծրագրին ծանոթացած քաղաքացիների մոտ այն ընկալվում է որպես ծավալուն, բարդ և մասնագիտական լեզվով գրված փաստաթուղթ, որը բավարար չափով հարմարեցված չէ լայն հանրության համար:

Այս համատեքստում հարցման արդյունքներով պայմանավորված առկա են լավարկման հետևյալ առաջարկները.

Առաջարկ	Գործողություն	«Ծրագիր-գործընթաց» շեշտադրում	Չափելի արդյունք (KPI)
1. Պարզեցված հանրային տարբերակի ներդրում	Մշակել զարգացման ծրագրի պարզեցված հանրային տարբերակ՝ կարճ ամփոփումների, ինֆոգրաֆիկաների և վիդեոների ձևաչափով՝ ոչ մասնագիտական լեզվով:	Պարզեցված տարբերակում ներառել նաև՝ ինչ փուլում է ծրագիրը, ինչն է քննարկման ենթակա, ինչպես կարող է քաղաքացին ներգրավվել հաջորդ թարմացման փուլում:	<ul style="list-style-type: none"> ✓ ծրագրի իրազեկվածության չափում ✓ հանրային տարբերակի դիտումների/ներբեռնումների/հասանելիության ծածկույթ ✓ հարցումների միջոցով ծրագրի ընկալելիության գնահատական (այր/ոչ):
2. Վարչական շրջանների կտրվածքով ներկայացում (վարչական շեշտադրում)	Ներկայացնել ծրագիրը ըստ վարչական շրջանների՝ կոնկրետ «ինչ փոփոխություն որտեղ», «ինչ խնդիր է ուղղված», «ինչ արդյունք	Ցույց տալ, թե ինչն է փոխվելու: Օրինակ՝ կնվազի «կենտրոն-ձայրամաս» ընկալումը, կուժեղանա ծրագրի	<ul style="list-style-type: none"> ✓ Վարչական շրջանների նյութերի/դիտումների/մասնակցությունների հաշվառում ✓ Հարցումների միջոցով քաղաքացիների կողմից «իմ

	ակնկալել» տրամաբանությամբ:	կապը առօրյա կյանքի հետ:	վարչական շրջանը բավարար ընդգրկված է ծրագրում» գնահատում (այո/ոչ):
3. Միջանկյալ հանրային հաշվետվությունների պրակտիկայի ներդրում	Սահմանել պարբերական միջանկյալ հանրային հաշվետվությունների պրակտիկա՝ պարզ ձևաչափով՝ ինչն է արվել, ինչն է ընթացքի մեջ, ինչն է հետաձգվել և ինչու:	Հաշվետվությունների հետ զուգահեռ սահմանել՝ որ հարցերն են ենթակա վերանայման/վերադաս ավորման և ինչ մեխանիզմով է հանրությունը ներգրավվում այդ վերանայմանը:	✓ Հաշվետվությունների ժամանակացույցի պահպանում; հանրային վստահության/ընկալվող հաշվետվողականության չափում; հանրային հարցերի/մեկնաբանություններ ի ծավալ և դրանց արձագանքման ժամանակացույց:

Գնահատման արդյունքները նախատեսված են ծառայելու ոչ միայն վերլուծական արձանագրում, այլև գործնական հիմք քաղաքապետարանի քաղաքականության և կառավարման բարելավման համար:

Մասնավորապես վերլուծության եզրակացություններն ու առաջարկները կարող են անմիջապես կիրառվել՝

- Երևանի զարգացման ծրագրի առաջնահերթությունների վերանայման և հստակեցման գործընթացում,
- ոլորտային քաղաքականությունների (տրանսպորտ, շրջակա միջավայր, թվային փոխակերպում, տարածքային զարգացում) քաղաքական կշիռը վերասահմանելու համար,
- բյուջետային պլանավորման ընթացքում՝ ներդրումները քաղաքացիների կողմից ընկալվող ամենահրատապ խնդիրների ուղղությամբ կենտրոնացնելու նպատակով,
- հաղորդակցման և մասնակցության մեխանիզմների վերակառուցման համար՝ անցնելով «տեղեկացնելուց» դեպի «ներգրավել և համակառավարել» տրամաբանության:

Զեկույցը հնարավորություն է տալիս քաղաքապետարանին հիմնավորել որոշումները ոչ միայն մասնագիտական, այլ նաև հանրային ընկալման և սպասումների հիման վրա:

Գնահատումը ցույց է տալիս, որ հաջորդ ծրագրային ցիկլում անհրաժեշտ է անցում կատարել «փաստաթուղթ» մոդելից դեպի «գործընթաց» մոդել՝

- զարգացման ծրագիրը դարձնելով ոչ միայն ռազմավարական տեքստ, այլ շարունակաբար թարմացվող և հանրության հետ համակառավարվող գործիք,
- ծրագրում հստակ տարանջատելով կարճ, միջին և երկարաժամկետ նպատակները՝ ձևավորելով իրատեսական սպասումներ,
- ծրագրի ներկայացումն ու քննարկումը ինստիտուցիոնալացնելով նաև վարչական շրջանների մակարդակում՝ տարածքային օրինակներով և ցուցանիշներով,
- ամրագրելով միջանկյալ հաշվետվողականության պարտադիր մեխանիզմներ՝ «ինչ է արվել – ինչ է ուշացել – ինչու» տրամաբանությամբ:

Այս փոփոխությունները թույլ կտան, որպեսզի զարգացման ծրագիրը դադարի ընկալվել որպես վերևից ձևավորված հոչակագիր և վերածվի քաղաքային կառավարման կենդանի շրջանակի:

Այս գնահատումը բացահայտում է, որ քաղաքացիների հիմնական խնդիրը տեղեկատվության պակասը չէ, այլ ազդեցության բացակայության զգացումը: Առաջարկում է կառավարման նոր տրամաբանություն՝

- քաղաքացուն դիտարկել ոչ որպես հաղորդագրության հասցեատեր, այլ որպես համահեղինակ,
- մասնակցությունը կառուցել ոչ միայն ներկայացման փուլում, այլ առաջնահերթությունների ձևավորման և վերանայման ամբողջ ցիկլում,
- ապահովել հետադարձ կապի պարտադիր մեխանիզմներ՝ յուրաքանչյուր հարցի համար ձևավորելով հստակ պատասխանատվություն և ժամկետ:

Այս մոտեցմամբ գնահատումը դառնում է բաց կառավարման գործիք՝ օգնելով քաղաքապետարանին անցում կատարել միակողմանի հաղորդակցությունից դեպի երկխոսություն, իսկ ծրագրային պլանավորումից՝ դեպի համատեղ ձևավորված քաղաքային ապագա:

Քաղաքացիներին մատուցվող ծառայությունների որակի բարձրացման, «YES» հարթակի հանրային իրազեկվածության վերլուծության, օգտագործման փորձի և դրա արդյունավետության գնահատման, ինչպես նաև գործնական բարելավման հնարավոր ուղղությունների բացահայտման նպատակով 2025 թվականին նախաձեռնվել է հարթակի կիրառելիության և ազդեցության բարձրացման գնահատման հետազոտություն հանրության շրջանում:

Երևանի էլեկտրոնային ծառայությունների «YES» հարթակը նախատեսված է որպես ինտեգրված թվային գործիք՝ քաղաքային ծառայությունների մատչելիությունն ապահովելու և քաղաքացի-քաղաքապետարան փոխգործակցությունը պարզեցնելու համար:

Հետազոտությունն իրականացվել է խառը մեթոդների մոտեցմամբ՝ համադրելով քանակական և որակական տվյալները:

- Քանակական փուլ. իրականացվել է 300 դեմ առ դեմ հարցազրույց (CAPI) Երևան քաղաքի չափահաս բնակչության շրջանում՝ կիրառելով ստրատիֆիկացված քվոտային ընտրանքի մեթոդաբանությունն ըստ վարչական շրջանների, սեռի և տարիքի:
- Որակական փուլ. իրականացվել է 2 ֆոկուս խմբային քննարկում հետևյալ խմբերի հետ՝ «YES» հարթակից երբևէ օգտվածներ, «YES» հարթակից երբևէ չօգտվածներ:

Այս համադրությունը հնարավորություն է տվել ոչ միայն չափել ցուցանիշները, այլ նաև հասկանալ քաղաքացիների ընկալումների, դժգոհությունների և ակնկալիքների խորքային պատճառները:

Դաշտային աշխատանքներն իրականացվել են Նոյեմբերի 17-ից դեկտեմբերի 7-ն ընկած ժամանակահատվածում:

«YES» հարթակից ընդհանուր ընկալումները հարցվողների շրջանում մեծամասամբ դրական են (72%): Մասնակիցները հարթակը դիտարկում են որպես լիարժեք «մեկ պատուհան» քաղաքապետարանի հետ փոխգործակցության համար: Մինչդեռ, քանի որ հարթակը չի

ապահովում ծառայությունների ամբողջական փաթեթ (օրինակ համատիրությունների վճարների գործառույթի բացակայություն) կամ պահանջում է չափից շատ տվյալների մուտքագրում կամ չի փոխարինում այլ գործող հարթակներին, ձևավորվում է ակնկալիք-իրականություն ճեղքվածք, որը կարող է սահմանափակել կրկնակի օգտագործումը ու խթանել այլընտրանքային թվային գործիքների նախընտրությունը՝ հատկապես միջին և բարձր տարիքային խմբերում:

«YES» հարթակի մասին իրազեկվածությունը խիստ ցածր է (6% հուշումով իմացություն): Շատ քաղաքացիներ կամ ընդհանրապես տեղյակ չեն հարթակի գոյության մասին, կամ միայն մակերեսային պատկերացում ունեն դրա հնարավորությունների վերաբերյալ: Տեղեկացվածությունը հիմնականում բարձր է SS-գիտելիքներ ունեցողների և երիտասարդների շրջանում: Որակական հետազոտությունը ցույց տվեց, որ հարթակի մասին տեղեկացվածությունը հաճախ պայմանավորված է եղել այն փաստով, որ որոշ վճարումներ կամ գործողություններ հնարավոր են եղել կատարել միայն տվյալ հարթակի միջոցով:

«YES» հարթակի գործառույթներն ու օգտագործման փորձն ընդհանուր առմամբ դրական են գնահատվում, հատկապես՝ պարզության և գործնական օգտակարության տեսանկյունից: Տարիքային խմբերի մեծացմանը զուգընթաց նվազում է օգտագործման պարզության ընկալումը՝ հատկապես 66+ խմբում (42%), ինչը վկայում է թվային հմտությունների և նավիգացիայի հետ կապված հնարավոր խոչընդոտների մասին ավագ սերնդի համար: Միևնույն ժամանակ, որպես թույլ կողմեր նշվում են որոշ ֆունկցիոնալ բացեր (հատկապես՝ համատիրություններին առնչվող բաժնի բացակայությունը) և անձնական տվյալների չափազանց մեծ պահանջը, ինչը որոշ օգտատերերի համար նվազեցնում է հարթակի օգտագործման հարմարավետությունը և վստահությունը:

Ներկայացված է «Ավելի շուտ համաձայն եմ» + «Լիովին համաձայն եմ» ցուցանիշը Ընտրանքը՝ 300	Ընդհանուր	18-25տ.	26-35տ.	36-45տ.	46-55տ.	56-65տ.	66+տ.
Հարթակի բովանդակությունը պարզ և մատչելի էր ինձ համար:	81%	85%	89%	89%	75%	71%	73%
Այն օգնում է ինչպե՛ս ժամանակ պետական ծառայություններից օգտվելիս:	75%	94%	87%	84%	71%	57%	58%
Ինձ դուր եկավ հարթակի արտաքին տեսքը՝ դիզայնը, գույները:	70%	76%	84%	80%	63%	61%	52%
Ես խորհուրդ կտամ ուրիշներին օգտագործել այն:	66%	67%	79%	67%	60%	63%	58%
Հարթակում տեղեկատվություն գտնելը կամ գործողություններ կատարելը հեշտ է:	65%	73%	74%	80%	58%	61%	42%
Այն մեծացնում է հանրային ծառայությունների թափանցիկությունը:	65%	79%	75%	64%	56%	63%	54%
Ես ապագայում կօգտվեմ այս հարթակի ծառայություններից:	61%	61%	75%	80%	58%	43%	38%
Այն վստահելի և հուսալի է:	50%	48%	56%	44%	50%	53%	46%

Հարթակի հիմնական ֆունկցիոնալ տրամաբանությունը հասկանալի է և սովորելի հարցվողների համար, հատկապես փորձառու օգտվողների համար, որոնց մոտ ձևավորված են արագ և վստահ նավարկման հմտությունները: Հարթակի կառուցվածքը, մենյուների տրամաբանությունը և «Ազատ դիմում» գործառույթը գործում են որպես օգտագործման հարմար մուտքային կետեր, հատկապես երբ խնդրի դասակարգումը միանշանակ չէ: Միևնույն ժամանակ, հարթակի և դրա ծառայությունների անվանումների, ենթաբաժինների ձևակերպումների ու տեղեկատվական ճարտարապետության ոչ բավարար համապատասխանությունը քաղաքացու լեզվին խոչընդոտում է առաջին օգտագործման փորձը: Լրացուցիչ խնդիրներ են առաջանում նույնականացման կարգավիճակի վիզուալ ոչ

հստակության, որոշ տեխնիկական խափանումների և «նոր դիմում» ու «նախկին դիմումներ» գործառույթների ոչ հստակ տարանջատման պատճառով: Ընդհանուր առմամբ, հարթակը ֆունկցիոնալ առումով կայուն հիմք ունի, սակայն պահանջում է UX պարզեցում և լեզվական/կառուցվածքային հստակեցում, որպեսզի արդյունավետ լինի նաև առաջին անգամ օգտվողների և պակաս թվային հմտություններ ունեցող խմբերի համար:

«YES» հարթակի նկատմամբ թերահավատություն առավել նկատելի է հարթակից երբևէ չօգտվածների մոտ, ինչը պայմանավորված է ոչ այնքան դրա բովանդակությամբ, որքան գործնական կիրառելիության և արդյունավետության նկատմամբ անվստահությամբ: Տարածված են ընկալումները, որ հարթակը կարող է լինել բարդ, դանդաղ, տարեցների համար դժվար կիրառելի կամ տվյալների վերահսկման գործիք: Կա նաև ընկալում, որ «YES»-ով ներկայացված դիմումները կամ առաջարկները իրական ազդեցություն չունեն որոշումների վրա: Քաղաքացիները հաճախ չեն տեսնում հետադարձ կապ կամ արդյունքի հրապարակային արձանագրում, ինչի հետևանքով նվազում է օգտագործման մոտիվացիան: Միևնույն ժամանակ, նույնիսկ թերահավատ օգտատերերը նշում են, որ մեկ հաջող և տեսանելի լուծված դեպքը կարող է էականորեն բարձրացնել վստահությունն ու փոխել վերաբերմունքը հարթակի նկատմամբ:

Հարթակը ներկայում առավելապես հասանելի է թվային հմտություններ ունեցող խմբերի համար: Տարեցների և խոցելի խմբերի շրջանում ընդգծվում է օֆլայն այլընտրանքների և աջակցող մեխանիզմների բացակայությունը: Հարթակը դիտարկվում է որպես ճիշտ գաղափար և անհրաժեշտ գործիք, սակայն դեռևս չի ընկալվում որպես քաղաքացիական մասնակցության հիմնական հարթակ: Շատ քաղաքացիներ այն չեն կապում իրական որոշումների կայացման գործընթացի հետ:

Հարթակի հետագա արդյունավետությունը կախված է այն բանից, թե որքանով այն կկարողանա վերածվել ոչ միայն առանձին ծառայությունների փաթեթի, այլ քաղաքացու և քաղաքապետարանի միջև վստահելի, պարզ ու արդյունք տվող կապի հիմնական միջավայրի: Այդ դեպքում «YES»-ը կկարողանա ավելի լայն դեր կատարել՝ դառնալով քաղաքականությունների, այդ թվում՝ Երևանի զարգացման ծրագրի, հանրայնացման, քննարկման և հետադարձ կապի առանցքային հարթակ, ու նպաստել քաղաքացիական մասնակցության ձևավորմանը որպես շարունակական գործընթաց, այլ ոչ թե մեկանգամյա գործողություն:

Սույն գնահատումը Երևանի քաղաքապետարանին տալիս է ոչ միայն «YES» հարթակի տեխնիկական և օգտագործողական խնդիրների վերհանման հնարավորություն, այլև քաղաքային կառավարման թվային վերափոխման ռազմավարական հիմք: Այն կարող է օգտագործվել՝

- «YES» հարթակի զարգացման առաջնահերթությունների սահմանման համար
- Թվային ծառայությունների քաղաքականության վերանայման և համադրման համար
- Երևանի զարգացման ծրագրի հանրայնացման և հետադարձ կապի գործիքների բարելավման համար
- Քաղաքացիների մասնակցության մեխանիզմների ձևավորման և ինստիտուցիոնալացման համար:

Հետազոտության արդյունքները ցույց են տալիս, որ «YES»-ի հիմնական սահմանափակումները ոչ այնքան տեխնիկական են, որքան վերաբերում են իմացությանը, վստահությանը, ընկալելիությանը և ամբողջականությանը: Այս պայմաններում հարթակի զարգացումը պետք է դիտարկվի ոչ միայն որպես IT նախագիծ, այլ որպես կառավարման գործիք, որը ձևավորում է քաղաքապետարանի և քաղաքացու հարաբերության որակը:

Հաջորդ քայլերի տրամաբանությունը կարող է կառուցվել երեք մակարդակով.

1. Կառավարչական մակարդակ

- «YES» հարթակի հստակ տեղադրումը քաղաքապետարանի թվային էկոհամակարգում՝ որպես հիմնական շփման և սպասարկման միջավայր:
- Պատասխանատու ստորաբաժանման կամ product owner-ի սահմանում՝ հարթակի ռազմավարական զարգացման համար:
- Կատարողական ցուցանիշների (KPI) սահմանում և պարբերական մոնիտորինգ՝ օգտագործման, արձագանքման արագության և օգտվողների գոհունակության ուղղություններով:

2. Գործիքային մակարդակ

- Հարթակի օգտագործելիության, նավիգացիայի և որոնման բարելավում՝ նոր և տարեց օգտվողների համար:
- Դիմումների ընթացքի տեսանելիության ապահովում և մերժումների որակի բարձրացում՝ որպես վստահության կառուցման հիմնական մեխանիզմներ:
- «Մեկ պատուհանի» տրամաբանության ամբողջական իրականացում՝ հատկապես համատիրությունների և հիմնական քաղաքային ծառայությունների ինտեգրման միջոցով:

3. Հաղորդակցական և մասնակցային մակարդակ

- «YES»-ի ակտիվ առաջխաղացում՝ որպես քաղաքապետարանի պաշտոնական և արդյունք տվող միջավայր:
- Իրական օրինակների հրապարակում՝ «խնդիր-դիմում-լուծում» շղթայով:
- Հարթակի օգտագործում ոչ միայն դիմումների, այլ նաև քաղաքապետարանի քաղաքականությունների, այդ թվում՝ Երևանի զարգացման ծրագրի, հանրայնացման և քննարկման համար:

Այս համատեքստում «YES» հարթակը կարող է դառնալ ոչ միայն ծառայությունների մատուցման գործիք, այլ մասնակցային կառավարման առանցքային հենարան: Երբ քաղաքացին ունի հասկանալի, կանխատեսելի և արդյունք տվող միջավայր, նա ավելի հակված է ոչ միայն դիմելու խնդրի դեպքում, այլ նաև մասնակցելու քաղաքի զարգացման օրակարգի ձևավորմանը:

Այդպիսով, «YES»-ի զարգացումը ուղղակիորեն նպաստում է՝

- Քաղաքապետարանի և քաղաքացու միջև վստահության ամրապնդմանը
- Երևանի զարգացման ծրագրի հանրայնացման և հետադարձ կապի արդյունավետությանը
- Քաղաքացիների մասնակցության ձևավորմանը որպես շարունակական գործընթաց, այլ ոչ թե մեկանգամյա գործողություն:

Սույն փաստաթուղթը կարող է ծառայել որպես հիմք՝

- Ռազմավարական որոշումների կայացման համար
- Զարգացման ճանապարհային քարտեզի մշակման համար
- Հետագա մոնիտորինգի ու հաշվետվողականության համակարգի ձևավորման համար:

ՏԵՂԵԿԱՆՔ-ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ԵՐԵՎԱՆԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ 2025 ԹՎԱԿԱՆԻ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Համաձայն «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 83-րդ հոդվածի 3-րդ մասի՝ Երևանի զարգացման ծրագրի իրականացման վերաբերյալ քաղաքապետը հաշվետվություն է ներկայացնում Երևան քաղաքի ավագանուն:

Նախագիծը նպատակ ունի համակողմանիորեն ներկայացնել 2025 թվականի ընթացքում իրականացված հիմնական ծրագրերն ու միջոցառումները, դրանց արդյունքները, ինչպես նաև հիմնավորել շարունակականության և 2026 թվականին նախատեսվող հետագա քայլերի անհրաժեշտությունը:

2025 թվականի ընթացքում քաղաքաշինության և ենթակառուցվածքների ոլորտում իրականացվել են մեծածավալ աշխատանքներ: Շարունակական է եղել նախադպրոցական, արտադպրոցական և մշակութային հաստատությունների վերանորոգման և հիմնանորոգման գործընթացը: Զուգահեռաբար իրականացվել են մանկապարտեզների բակերի բարեկարգման աշխատանքներ, ինչը նպաստել է երեխաների համար անվտանգ և բարենպաստ միջավայրի ստեղծմանը: Վարչական շրջաններում իրականացվել են բակերի, հանրային տարածքների բարեկարգման, ինչպես նաև սպորտային ենթակառուցվածքների կառուցման աշխատանքներ: Այս միջոցառումները էականորեն նպաստել են համայնքային կյանքի ակտիվացմանը և բնակիչների սոցիալական ներառմանը:

Քաղաքի էկոլոգիական կայունության բարձրացման նպատակով իրականացվել են լայնածավալ բնապահպանական միջոցառումներ: Մասնավորապես, մեկնարկել է Նուբարաշենի խճուղու հարևանությամբ անտառապաշտպանիչ բուֆերային գոտու ստեղծման ծրագիրը, որը ներառում է ոռոգման ենթակառուցվածքների կառուցում և շուրջ 10 650 ծառի տնկում: Քաղաքի տարբեր հատվածներում իրականացվել են կանաչապատման աշխատանքներ՝ տնկվել են ծառեր, թփեր և ծաղիկներ, հիմնվել են նոր ծաղկանոցներ և ուրբան անտառային գոտիներ: Այս աշխատանքներն ուղղված են օդի որակի բարելավմանը, քաղաքային միկրոկլիմայի կայունացմանը և բնակչության առողջ կենսակերպի խթանմանը:

Էական առաջընթաց է արձանագրվել կենցաղային թափոնների կառավարման ոլորտում: Մշակվել և հաստատվել է խառը կենցաղային թափոնների վերամշակման գործարանի կառուցման և շահագործման ներդրողի ընտրության մրցութային գործընթացը, որի մրցույթը նախատեսված է ավարտել 2026 թվականին: Միաժամանակ իրականացվել են կոյուղատար և հեղեղատար համակարգերի կառուցման և վերակառուցման աշխատանքներ, ձեռք են բերվել նոր աղբատար և կոմունալ մեքենաներ, ինչպես նաև տեղադրվել են ժամանակակից աղբամաններ տարբեր վարչական շրջաններում: Իրականացված աշխատանքները նպաստել են

սանիտարական վիճակի բարելավմանը և քաղաքային ծառայությունների արդյունավետության բարձրացմանը:

Հաշվի առնելով բնակչության կարծիքը և առաջնահերթ խնդիրները՝ 2025 թվականին հատուկ ուշադրություն է դարձվել հասարակական տրանսպորտի զարգացմանը: Մեկնարկել է նոր, ժամանակակից տրոլեյբուսների ձեռքբերման գործընթացը, որոնք նախատեսվում է շահագործման հանձնել 2026 թվականին: Իրականացվել են կլիմայական փոփոխություններին հարմարվողականության ծրագրեր, այդ թվում՝ անձրևաջրերի հավաքման և օգտագործման բնապահպանական ծրագիրը, որը կկիրառվի հաջորդ տարի:

Վերը ներկայացված միջոցառումները վկայում են, որ Երևանի զարգացման 2025 թվականի ծրագիրը իրականացվել է համակարգված և նպատակային կերպով՝ ապահովելով շոշափելի արդյունքներ մի շարք ռազմավարական ոլորտներում: Միևնույն ժամանակ, իրականացված ծրագրերը ստեղծում են անհրաժեշտ հիմք դրանց շարունակականության և ընդլայնման համար 2026 թվականին:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ Երևան քաղաքի ավագանու քննարկմանն է ներկայացվում «Երևանի զարգացման 2025 թվականի ծրագրի իրականացման հաշվետվությունը հաստատելու մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման նախագիծը:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ՝ ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ